



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ. Էջմածին. (Նկարագիրք. Մակար Սրբազան, Ներսէս Սրբազան, Սուքիաս Սրբազան)	Ա. ԱՐՓԻԱՐԵԱՆ
ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ. Աշխարհի մը վերջին աշխատութեանց վրայ. (Արաբիա, Մէրվ եւ Զինաստան)	Յ. Ե.
ԱԶԳԱՅԻՆ. Ամենահին ղեղձունք յԱֆրոն Գարա հիսար.....	Ս. ԴԱԻԹԵԱՆ
ՆՈՐԱՎԷՊ. Բաքային (Էթիով ՄԱՆՈՅ)	
ԳՐԱԿԱՆ. «Համով—Հոռով»	
ԲԱՆԱՍՏԵՂՆԱԿԱՆ. Բանաստեղծութիւնն (ԼԱՄԱՐԹԻՆ) Թարգմ.....	Յ. ԹԱՐԱՐԵԱՆ
ԶԱՆԱԶԱՆՔ. Երկու ժամ Մաղասի բանտին մէջ (ՖԻԿԱՐՕ)	
ՔԱՂՈՒԱՆ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՅ. Սրտաքին, Ներքին, Ազգային.....	
ՍԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ. (ԿԶԱՎԻՅ ՏՐ ՄՕՆԹԵՐԷՆ) Թարգմ.....	Մ. ՉՈՊԱՆԵԱՆ

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼԻԱ ԵՒ ՔԱԼԱՈՆԵՐՈՒ — տարեկան.....	Կէս Օսման. ոսկի
» » վեցամսեայ.....	Քառ » »
ՄԷԿ ԹԵՐԹԻՆ ՎԻՆՆ Է	60 փարայ
Օտար քաղաքաց համար տարեկան.....	12 փրանք
» » վեցամսեայ.....	6 »
ԹՂԹԱՏԱՐՈՒԹԵԱՆ ՃԱԽՔ տարեկան.....	Դահ. արծ. 15
վեցամսեայ	» » 7½

Մասիսի Խմբագրութեան ուղղեալ ո՛ր եւ է գրութիւն կամ նամակ պէտք է ուղղել առ

Խմբագրութիւն Արեւելք և Մասիս Լրագրաց
Ղալաթիա, Նորատունկեան խան

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ

1885

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՑ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 41 Յունիար

ԸՆԹԱՅՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՅ

ամիս Լոնտրայի վրայ (պանքայի)	110	1/2
3 » » » (վճռահան)	110	1/8
3 » Բարիսի » (պանքայի)	22	85
» » » (վճռահան)	22	92 1/2

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՂԹՈՅ

Օսմանեան Բոնսօլիտի

Իրէկ երեկոյ գոցուեցաւ	7	36
Պօրապիս գոցուելէն վերջը	8	37 1/2
Քերայի մէջ	—	—
Առաւօտուն բացուեցաւ	8	34 1/2
Բարձրագոյն գին	—	—
Նուաղագոյն	—	—
Կէս օրին	8	35
Իւնիֆիէ Եգիպտական (Գ. Կ.)	74	30
Երէկ Իրիկուն գոցուեցաւ	72	40
Բերայի մէջ	—	—
Այս առտու բացուեցաւ Գ. Կ.	72	5
Կէս օրին	72	5
Հէվայէսիլ	5	—
Իէբօր քօնսօլիտէի	—	—
» Իւնիֆիէի	—	—
Փոխառութիւն 1863	72	—
» 1865	56	50
» 1869	49	—
» 1873	43	50
Պօն տիւ Թրէզօր	Անգլ. Լ. Բ.	20 50
Բուսմէլի երկաթուղի	Ֆր.	45 25
Օպիկտսիօն տը Բրիտիթէ	»	—
Բաժնեթուղթ Լաւրիօմի	»	68

ԲԱԺՆԵՏՈՐՄՔ

Սօսիթէ Ժէնէրալ	(Գ. Կ.) Անգլ. Լ. Բ.	3 46
Քրէտի Ժէնէրալ	» » Օսմ. Լ. Բ.	6 30
Պանք տը Գօնս	» »	5 05
Սօս. Շանօ է վալէօր	» » Օսմ. Լ. Բ.	3 48
Թրամուէյ	» »	265

Ընթացք դրամաց

Օսմանեան ոսկի	782	400
20 Ֆրանքաց	»	87 32
Անգլիական ոսկի	»	110 22
Բօլ Իմբերիալ	»	90 40
Քրիմից	»	51 45
Ռուսլի թղթադրամ	»	8 67

» արծաթ	»	89 10
Յիօրին	»	9 2
Մէճ. արծ. (տարբ.)	»	108 3
Վեցնոց	»	102 35
Հինգնոց	»	102 35
Մէթալիք	»	99
Պղինձ	»	800
Թղթադրամ	»	3200

ԵՐԻՊՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 22 Յունիար ժամ 5 վայր. 15 երեկոյ

Անգլ. քօնսօլիտէ գոցուեցաւ	99	15/16
Օսմ. բացուեցաւ	45	15/16
» » գոցուեցաւ	45	7/8
Օսմ. փոխառութիւն 1865	41	1/8
» » 1869	9	7/8
» » 1871	68	5/4
» » 1872	49	—
» » 1873	8	5/2
Փոխառութիւն 1877	81	5/4
Պանք Օթօման	13	5/4
Ռուսական փոխառ. 73 (գ. Կ.)	95	7/8
Եգիպտական միացեալ (Իւնիֆիէ)	65	—
» առանձն. (Բրիտիլէժիէ)	87	5/4
Տպրա Սանիէ	63	1/8
Տօմանիալ (փոխառ. Բօշիլտ)	86	5/4
Հունգարական պարտութուղթ 1877	—	—
Փոխանակութիւն Բարիզի վրայ	—	—

Վիեննա, 22 Յունիար ժամ 10 վ. 30 երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	124	10
Օսմանեան երկաթուղի	21	70
Բարիզ, 22 Յունիար ժամ 3 վայր. 15 երեկոյ		
Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0	110	5
» » 3 0/0	80	7 1/2
Օսմանեան քօնսօլիտէ բացուեցաւ	16	15
» » գոցու. (գ. Կ.)	16	15
» » 1865	55	—
» » 1869	48	—
» » 1873	44	—
Օսմանեան երկաթուղի	45	50
» Իէժիի բաժնեթուղթ	—	—

Պանք Օթօման	597	50
Գրէտի Լիօնէ	540	—
» Ֆօնսիէ (գ. Կ.)	1323	75
Բաժնետոմս Լիօնի (գոլ. կտր.)	1257	50
Սուէզի ջրանցք	1855	—
Ռուսական 5 0/0 1877 (գ. Կ.)	99	1/2
Իտալական Ռանթ (գ. Կ.)	97	45
Եգիպտական միացեալ գոց	329	37 1/2
Սպանիական (արտաքին) (գ. Կ.)	60	1/8
Բրիտիլէթ Թիւրք	399	37 1/2
5 0/0 Հելլենական (գ. Կ.)	—	—
2 էք Լոնտրայի վրայ	25	33

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹ ԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

3477 ՏԱՐԻ

1885 ՅՈՒՆՈՒԱՐ 12

ԹԻԻ 3752

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ

ԷԶՄԻԱԾԻՆ

Ա.

ՆԿԱՐԱԳՐՔ. ՄԱԿԱՐ ՍՐԲԱԶԱՆ, ՆԵՐՍԷՍ
ՍՐԲԱԶԱՆ, ՍՈՒՔԻԱՍ ՍՐԲԱԶԱՆ

Արեւելի կը պարունակէ արդէն բաւական տեղեկութիւններ Ռուսիոյ Հայոց մասին. ուստի հարկ տեսանք զրեւ Մասիս ընթերցողաց համար այն մի քանի տեղեկութիւնները զոր պիտի հրատարակէինք Արեւելի մէջ վերաբերմամբ Էջմիածնի եւ Նրեւանի:

84 մայիս թին Էջմիածին գումարեալ Աղդ. Ժողովը կատարած էր իւր առաջին կէս պաշտօնական նիստը եւ մերժած էր Ներսէր Սրբազանի հրաժարականը, երբ նոր հասած էի Էջմիածին: Զանազան տեսակցութիւններէ վերջ, երեկոյեան դէմ փափաքեցայ կատարել քաղաքավարական պարտականութիւնս եւ ներկայանալ կաթողիկոսական տեղակալ Ամեն. Մակար Սրբազանին: Բաւական ժամանակէ ի վեր այդ առումը մեծ դեր կը կատարէր առ մեզ, թէպէտ կարծեմ անգործ դեր: Ամենուրեք կը խօսուէր Մակար Սրբազանի վրայ: Թրքահայք ցաւ մը չպիտի զգային եթէ Նորին Սրբազնութիւնը բարձրանար ի դահ կաթողիկոսական, իսկ Ռուսահայք կ'ունենային բոլոր զայրոյթ մը եթէ պատահէր այդ իրողութիւնը: Կարծեաց այս տարբերութիւնը,

մեր եւ Ռուսահայոց միջեւ, զգալի տարացոյց մ'էր թէ ո՞րչափ անձանօթ էին մեզ, նոյն իսկ ամենակենսական խնդրոց մասին, Ռուսահայոց միտումները: Մեծ հետաքրքրութեան մէջ էի. ներկայանալու պատիւը վայրկեան մ'առաջ կ'ուզէի ունենալ: Ըստ սովորութեան հիւրընկալ Հայոն հաղորդեց փափաքս Նորին Սրբազնութեան եւ հաճութիւնն ստանալով պատրաստուեցայ ընկերանալ Հայր Սուրբին: Կ'ուզէի մի քիչ արդուզարդ ընել, եւ երկու օրերու մէջ հաւաքած փոշիներուս հետքն իսկ չպահել բայց ներկայք աւելորդ աշխատութիւն համարեցին զայս: Թէպէտ ես ունին չդրի նոցա եւ ըրի ինչ որ պէտք էր ընել, բայց վատ տպաւորութիւն մը գործեցին վրաս այն շարժումներն յորոց կարելի էր գուշակել թէ՛ հնարաւոր էր ներկայանալ Հայոց կաթողիկոսութեան տեղակալին այնպիսի վիճակի մը մէջ որով չենք կրնար այցելել ուրիշ բարձրագոյն տեղեր: Այսպիսի դէպքեր թէպէտ առ երեւոյթս ոչինչ կ'երեւին, բայց պէտք չէ արհամարհել զայնս: Պարտ ու պատշաճ վայելչութիւնը յարգանաց առաջին ապացոյցն է: Բայց աստի կարծեցի թէ Հայոց Մայր-Վանուց մէջ մաքրութիւնն անհրաժեշտ պէտք մը համարուած չլինի: Շատերնիս չենք կըրնար ըմբռնել թէ՛ անհատ մը, ընկերական հաստատութիւն մը, կարող լինի յառաջագիւմել եթէ չափրէ նորա վրայ ամենակատարեալ մաքրութիւն: Բայց երկիւղաւ ըստ անհետացաւ: Մանուածապատ ճանապարհներէ անցնելով, փայտաշէն խարխուլ դռներէ եւ սեմերէ անցնելով կը մտնէր փոքրիկ սենեակ մը, մաքուր, սիրուն, կոկիկ, զարդարուած պարսկական դորդերով, եւ ամէն հանգստութիւն ընծայող նստարան-

ներով: Դունէն ներս մտած ժամանակ ձախ անկիւնը փոքրիկ դրասեղան մը կայ: Գըրասեղանին առջևն է մի ծերունի եկեղեցական, մօրուքը ճերմակ բայց ոչ վեհափայլ այլ ցանցառ: Կարմիր այտեր, արծուունդն քիթ մը բոլորովին հայկական, երկու աչքեր որոց խորը թափանցել դժուար է և որք աւելի կ'ախորժին վար նայիլ քան թէ ուղիղ աչքերուդ մէջ. այսպէս կը սլատկերանայ Հայոց կաթողիկոսի տեղակալը: Հասակը երկայն է, թէպէտ քիչ մը կորացած, մարմինը ջղուտ, ծերունի եկեղեցականը առոյգ է և կայտառ: Ձայնը լաւ է բայց չոր, և աւելի խոստում լինելու կը հակի: Հատիկ հատիկ կը խօսի և կարծես թէ կ'ուզէ մտածել արտասանելիք իւրաքանչիւր բառին վրայ: Գեղեցիկ, մաքուր զգեստներ հագած է և զլուխը թաւիչէ աստիճան կը կրէ: Կատարեալ մաքրութիւն մը կը փայլի Սրբազանին գիմաց եւ զգեստներուն վրայ. բիծ մը գտնել անհնար է որքան ալ ուշադիր նայիս. կարծես թէ Նար-Պէյ Խորէն Սրբազանն է, ծերացած:

Յարգանքը համբուրեցի Սրբազանի աջն և նստայ իւր մօտը աթոռին վրայ: Բաւական փափուկ կացութեան մէջ էի: Նրկար տարիներ աշխատակցած էի թերթի մը որ շատ հեռի էր Մակարեան լինելէ. իսկ այժմ կը ներկայացնէի Պոլսոյ հայ թերթ մը որ տուած էր անուղղակի կերպով ամենածանր հարուածը Մակար Սրբազանի Կաթողիկոսութեան: Վիճակիս ծանրութիւնը զգալով հարկ էր որ քան զսովորականն աւելի քաղաքավար, անուշ լեզու և ժպտուն դիմօք լինէի: Մեր խօսակցութեան նիւթերն էին նոյն օրուան դէպքերը, Պոլսոյ Ազգային ժողովը ընթացքն, լրագրաց ուղղութիւնն, Թուրքիոյ Հայոց արդի կացութիւնը: Ի հարկէ լուռ կ'անցնէինք այն պարագայն որով Ազգ. Ժողովն իւր երեք ընտրելաց մէջ չէր դասած Նորին Սրբազնութիւնը: Այս մերժումը շատ դէշ ապրեցութիւն ըրած էր Նորին Սրբազնութեան և իւր բարեկամաց վրայ, իսկ ընդհակառակն լաւ տպուորութիւն դործած էր հակա-Մակարեան բանակին վրայ: Մեր Ազգ. Ժողովն առաջին ընտրելի ընելով Ներսէս Սրբազանն, և մերժելով Մակար Սրբազանն ընտրելաց ցան-

կէն, շատ յանցանքներ քաւած էր յաջս Ռուսահայոց:

Մակար Սրբազան յոյժ քաղաքավար և սիրալիր ընդունելութիւն ըրաւ, ինչպէս վայել էր մեծ աթոռի մը տեղակալին: Թէյ-յերն իրարու կը յաջորդէին և կը խօսակցէինք: Նոյն պահուն անդ եկաւ նաեւ բնութֆէստօր Պ. Ներսէսեան, որով մեր խօսակցութիւնը մի քիչ աւելի կենդանութիւն առաւ: Ի մէջ այլոց Մակար Սրբազան խորին ցաւ կը յայտնէր այն կէտին վրայ թէ Թուրքիոյ Հայք կարող չեն եղած մինչեւ ցարդ որոշել իրենց ուղղութեան գիծ մը և թէ ամէն դործի մէջ կը մտնեն ըստ անոր համար: «Ամէն ինչ կիսկատար կը թողուք, կ'ըսէր. այսօր այս կ'ընէք, վաղը զայն կը թողուք ուրիշ բանի մը կը ձեռնարկէք. յուսանք թէ, կ'ըսէր, «Արեւելք» հետամուտ լինի այս չարեաց առաջն առնուլ:» — Մակար Սրբազան իրաւունք ունէր. ինչ որ իրաւացի է, խոստովանելու է. սակայն հապառակաբար այնքան արմատացած է մեր սովորութեանց մէջ որ կարծենք թէ շատ դժուար պիտի լինի, չըսենք անհնարին, այդ սովորութիւնն արմատախիւ ընել մեր բարոյց մէջէն:

Կաթողիկոսական ընտրելոյն վրայ կը փախազէի Նորին Սրբազնութեան կարծիքն իմանալ, բայց ժպտելով ըսաւ. «Ինչ որ ըսեմ, անմիջապէս պիտի հեռագրես, ուստի զդոյշ կը կենամ»: — Խօսքը կատակի փոխեցինք, բայց մակարեբերցի թէ արդէն կը խորհէր մեծ որոշում մը տալ այդ կերեւէր իւր ժպտելու եղանակէն: Ազգային մէջ տուաւ այդ որոշումը, որ այնքան պատուաբեր եղաւ իրեն համար:

Յետ այս խօսակցութեանց՝ աջն համբուրելով Պ. Ներսէսեանի հետ մեկնեցանք:

Ինչ որ ալ լինին մեր կարծիքները կաթողիկոսական ընտրելոյ մասին, չենք կրնար ուրանալ որ Մակար Սրբազան լաւ տպուորութիւն կը թողու անոնց վրայ որք պատիւ ունին Նորին Սրբազնութեան հետ տեսակցելու: Ահներեւ կը տեսնուի թէ խորհող անձ մ'է, լրջամիտ և խոհեմ: Միայն թէ խոհեմութիւնը գուցէ այն աստիճանի կը հասցնէ, որ այլեւս խոհեմութիւն անուանը չկրէ: Անտարակոյս նորա ազգասիրական զգացումներն և ընդունակութեան

սահմանը կարելի էր լաւ հասկնալ կէս ժամուան տեսակցութեան մը մէջ, և այս մասին հարկ էր լաւ հետախուզել ինչի թէ ի՞նչ կը խօսուէի ամենուրեք: Առանց ո՛ր և է աշխատութեան կարելի է չուտով ի միտ առնուլ թէ Ռուսիոյ Հայոց համար ամենամեծ դժբաղդութիւն մը պիտի լինէր այն օրն երբ Մակար Սրբազան Հայոց Կաթողիկոս ընտրուէր: Նորին Սրբազնութեան դէմ արտաքոյ կարգի հակակրօնութիւն կայ Ռուսիոյ Հայոց ամէն դասերուն մէջ: Զեն ուրանար Մակար Սրբազանի դանազան կարգի արժանիքն. բայց երբ Կաթողիկոս բաւը կ'արտասանես նորա համար, կարծես սարսուռ կ'զգաս: Ոչ մէկ գաւառ ընտրեց Մակարեան պատգամաւոր մը. ո՛չ մէկ թերթ համարձակեցաւ պաշտպանել Նորին Սրբազնութեան ընտրելիութիւնը: Միայն Մեղու-Հայաստանի Մակարեան կը համարուէր, բայց պահպանողական թերթը զգաց թէ ամենամեծ յաղգնութիւն մը ի գործ դրած պիտի լինէր եթէ արտասանէր Մակար Սրբազանի անունը. հետեւաբար զգոյշ կեցաւ այս անխոհեմութիւնն ի գործ դնելէ:

Ինչո՞ւ այսքան հակակրօնութիւն ընդդէմ Մակար Սրբազանի: — Պատճառները բազմադիւրի էին. Նորին Սրբազնութեան անցեալը զեղեցիկ յանձնարարականներ չընծայեր ներկային համար, ըստ վկայութեան Թիֆլիզի և Երեւանու ամենէն նշանաւոր անձանց: Ներկային մէջ թոյլ կը համարուի, չարազանց պահպանողական: Օրինակ իմն. Հանգուցեալ Կաթողիկոսը իւր օրովը բաւական բարեխօսած էր Բօլշևիկները: Մօլեպինը մի աղօթք է Ռուսիոյ կայսերական ընտանեաց համար, զոր պէտք է արտասանեն ժողովուրդ և եկեղեցականք ծնրադիր եւ գլուխին բաց: Անտարակոյս Էջմիածին չի հակառակիր Ռուսիոյ կայսերական ընտանեաց համար աղօթել. բայց պէտք է որ այս աղօթքը լինի ըստ սովորութեանց Հայաստանեայց եկեղեցւոյ: Հանգուցեալ Կաթողիկոսը ջնջած էր Բօլշևիկներն այն ամէն բացատրութիւններն և ձեւակերպութիւններն որք չէին համապատասխաներ մեր եկեղեցական աւանդութեանց: Երբ Մակար Սրբազան տեղապահ եղաւ՝ կառավարութիւնը կը սլահանէր որ Բօլշևիկներ վերահաստատուի ըստ

առաջնոյն: Մակար Սրբազան կը համարձակի վերահաստատել ինչ որ Կաթողիկոս մը ջնջած էր: Այս մէկ դէպքը բաւական եղած էր վերջին ժամանակներս որ սաստկանան ընդդէմ Մակարի ստեղծութիւնները:

Մակար Սրբազան ո՛ր և է ազդեցութիւն չունի վանուց մէջ: Կաթողիկոսական ընտրութեան վերջ մեկնեցաւ ի Քիշնեւ, անխնամ թողլով Աթոռն և նորա պատկանող ամեն կարգի կենսական չահերը: Մակար Սրբազան իւր անձնական առողջութիւնը պատճառելով մեկնած է, բայց ստոյգ աղբիւրներէ տեղեկութիւնք հաստատեցին յետոյ թէ՛ իւր հեղինակութիւնը այնքան աղկարացած էր որ զգացած էր թէ՛ այլ եւս կարող չպիտի լինի ի գործ դնել իւր իշխանութիւնը պարտ ու պատշաճ եղանակաւ:

Եթէ Էջմիածին գտնուէր սովորական վիճակի մէջ, եթէ հարկադրեալ չլինէր մաքառիլ արտաքին և ներքին թշնամեաց դէմ, եթէ ամէն գործեր կանոնաւոր վիճակի մէջ լինէին, այն ատեն Մակար Սրբազան կարող էր բաւական լաւ Կաթողիկոս մը լինել: Բայց մեր արդի վիճակը տարբեր է. բազմակիւն խնդիրներ կան լուծելու. մեծամեծ բարեկարգութիւններ կան ի գործ դնելու. և այդ ամէնն ի գլուխ հանելու համար անհրաժեշտ է որ Հայոց Կաթողիկոսը ո՛չ միայն օժտեալ լինի մեծամեծ յատկութիւններով, այլ և ազդին, մանաւանդ Ռուսահայոց սէրն ու համակրութիւնը վայելէ: Ոչ մէկ Կաթողիկոս կարող է օգտակար լինիլ ազդին, եթէ իւր բարոյական իշխանութիւնը չէ յենած հաստատ ժողովրդական կանոնութեան վրայ: Այս մտածութիւններէ առաջնորդեալ գործեց Էջմիածնայ Ազգ. Ժողովը, և Մակար Սրբազան լաւ ըմբռնած էր այս ճշմարտութիւնը, թէ պէտեւ մի քիչ ուշ:

Կաթողիկոսական ընտրութիւնը կատարուելէ վերջ երբ պիտի մեկնէի Էջմիածնէն, վերադառնալ ներկայացայ Մակար Սրբազանին, ընկերակցութեամբ Պարսկաստանի պատգամաւոր Պ. Հ. Աւաքեւեանի:

— «Տեսա՞ր հիմա, ո՞վ եղաւ Կաթողիկոս», ըսաւ Մակար Սրբազան ժպտելով, երբ սենեակէն ներս մտայ:

Յետ այնորիկ Սրբազանը մեծամեծ դովեստիւք խօսեցաւ Ներսէս Կաթողիկոսի

մասին, յայտնելով թէ պատրաստ է իւր բոլոր աջակցութիւնը նուիրել Նորին Վեհապետութեան :

Յայտնեցի Մակար Սրբազանին թէ՛ Ներսէս Սրբազան միշտ համակրանօք կարծիք յայտնած է ամենուրեք Նորին Սրբազնութեան մասին և թէ ընդհանրապէս Թուրքիոյ Հայք ո՛ր և է հակառակութիւն չեն ունեցած իրեն դէմ: « Սակայն, Սրբազան, աւելցուցի, պէտք է խոստովանիմ որ Ռուսիոյ մէջ տրամադրութիւնները բոլորովին տարբեր գտայ. ամենուրեք ժողովուրդը անխափր հակառակորդ է Ձեր Սրբազնութեան և միայն Ներսէսը կ'ուզէ »:

Երբ այս բառերն արտասանեցի, Պ. Հ. Առաքելեան ապշած երեսս կը նայէր. ինքն թէպէտ ջերմ հակամակարեան մ'էր՝ կը զարմանար թէ ի՞նչպէս կարելի էր այս աստիճան առաջ երթալ: Մակար Սրբազան ինքն ալ զարմացաւ: Բայց ես իմ յատուկ նպատակս ունէի այս խօսքերն արտասանելով. միանգամայն կը մտածէի թէ ամէնուս պարտականութիւնն է բերանացի թէ գրաւոր հաղորդել հասարակաց կարծիքն անոնց ոյք այդ հասարակութեան հետ գործելու պարտական են:

Մակար Սրբազան ի հարկէ դո՛ւր մնաց երբ ըսի թէ Թուրքիոյ Հայք իրմէ դժգոհութիւն մը չունին, և այս գոհունակութիւնը իւր ղիմաց վրայ կը տեսնուէր. իսկ երբ խօսեցայ Ռուսիոյ Հայոց մասին, մի քիչ դէմքը խոժոռեցաւ և ըսաւ.

— « Ժողովուրդը ի՞նչ յանցանք ունի որ այս ինչը կը սիրէ և այն ինչը չսիրեր. պատճառը ահա՛ ասոնք են » ըսաւ և մատնանիլ ըրաւ սենեակին մէջ գտնուող եկեղեցականներն: — Այդ խօսքերը բաւական մեկնութեան կարօտ էին և ես կ'ենթադրեմ թէ Մակար Սրբազան կ'ուզէր ըսել թէ եկեղեցականք ընդդէմ իրեն տարածում կ'ընեն ժողովուրդին մէջ:

Պ. Առաքելեան և ես նոյն պահուն պիտի մեկնէինք Էջմիածնէն. ուստի չէինք կարող երկարել մեր տեսակցութիւնը Մակար Սրբազանի հետ: Համբուրեցինք աջն և մեկնեցանք:

Շատ դո՛ւր էի որ կարող եղայ ի մօտոյ ճանչել այսպիսի անձնաւորութիւն մը. աւելի դո՛ւր էի որ բաւական լաւ գաղափար

մ'ունեցայ Նորին Սրբազնութեան վրայ, իսկ ամէնուն հետ շատ աւելի դո՛ւր էի որ այնքան ազնուութեամբ հրաժարեցաւ Վաթիկանական ընտրելիութենէ և փակեց բաւական չարեաց դռներ: — Իցէ՛ թէ մեր արդի ընտրութեանց կարեւոր օրերու մէջ ունենանք Մակար Սրբազանի օրինակին հետեւողներ: Եթէ իրենց պէտքը զգալի է, Ազգը կարող է ածել զիրենք բռնութեամբ յաթոռ Պատրիարքութեան կամ Վաթիկանականութեան: —

Յետ Մակար Սրբազանի, հետաքրքրութիւն չարժող ամէնէն կարեւոր անձնաւորութիւններէն մին է Ներսէս Սրբազան, Էջմիածնայ գանձապետը: Արնաճը ըսել թէ Սիմոնի և Միաբանութեան ոգին է: Ձերմ Մակարեան է, խորագէտ և գործունեայ. մեծ. դեր խաղաց այն ամէն դէպքերու մէջ որք տեղի ունեցան Գէորգ Վաթիկանի մահէն յետոյ: Իւր բարեկամաց թիւն ստուար չէ, իսկ իւր հակառակորդներն ահադին թիւ մը կը կազմեն: Ներսէս Պատրիարքի Վաթիկանականութեան հակառակ քուէարկողներէն մին էր: « Ար ցանկանք Ներսէս Սրբազանի Վաթիկանական լինելուն, բայց քանի որ հրաժարական տուաւ Նորին Սրբազնութիւնը, խիղճս չներեր քուէ տալ նախ »: Բայց եթէ Ներսէս Սրբազան հրաժարական իսկ չտար, Ներսէս եպիսկոպոս իւր արդասաւոր մտաց մէջ ուրիշ պատճառներ պիտի կրնար գտնել որպէս զի զանայ իւր քուէն Ներսէս Սրբազանի: Ազատ էր իւր քուէն ըստ հաճոյս տալ. բայց չէր ուզեր անհաճոյ երեւիլ ընդհանրութեան:

Ներսէս եպիսկոպոս երիտասարդ է. դէմքը շատ թուխ է, բարձրահասակ և նիհար, կարծես թէ բոլոր ջիւղ է. մաղերը բաւական երկար ձգած է, թուի թէ միջնադարեան կրօնաւորի մը, մօտի մը դէմքը կը կրէ: Ծանր անձ մ'է, քիչ կը խնդայ, բաւական կը խօսի: Կարելի է ենթադրել թէ յոյժ յարեալ է Էջմիածնայ: Երբ « Սուրբ Աթոռ » կ'ըսէ, ի սրտանց կ'արտասանէ: Իւր հեղինակութիւնը ընդարձակ է. Մատենադարանը իւր իշխանութեան ներքեւ է: Շատ գործունեայ անձ է և՛ եթէ ուզէ՛ կարող է օգտակար լինիլ մեծապէս:

Ամէն հիւրերն, ինչ ալ լինի կարծեաց տարբերութիւններն, դո՛ւր կը մնան Ներսէս

Սրբազանի վարմունքէն . ամենայն մարդասիրութեամբ կը հիւրընկալէ և կը պատուասիրէ հիւրերն, զերդ մի ասպնջական տապետ : Իբրեւ մի տանտէր , շատ ուշագիւր է որ իւր հիւրերուն կարծեաց յոյժ բացայայտ կերպով չհակառակի . կարծես թէ քաղաքավարութեան պակասութիւն մը պիտի համարի այլ կերպ ընելը : Վերջապէս սա կրնանք ըսել թէ գանձապետ Ներսէս Սրբազանի անունն թէպէտ շատ չենք յեղյեղեր հրապարակի վրայ , բայց երբ Էջմիածին կամ Սինոդ կ'ըսենք , հարկ է որ Ներսէս եպիսկոպոսի անունն ալ անմիջապէս մեր մտաց առաջ բերենք :

Բայց Ներսէս եպիսկոպոսի զգուշաւորընթացից հետեւեալ տարտական չէր համարեր ինքզինք Սուքիաս եպիսկոպոս Պարզեանց, Աժտէրխանու առաջնորդն . ինքն աւելի հիւր կը համարուէր քան թէ հիւրընկալ : Ահա՛ Մակարեան մը որ «աւելի Մակարեան էր քան Մակար եպիսկոպոսն : » — Երբ Թ՛Վ՛Յ՛ լիզ էի, առաւօտ մը Նոր-Ղաթին մէջ կարդացի թէ կաթողիկոսական ընտրելի կրնայ լինիլ նաև Սուքիաս եպիսկոպոս Պարզեանցն : — Ո՛վ է այդ կը հարցնէի բարեկամաց : Բաւական լաւ կը խօսէին նորա գործունէութեան և եռանդեան մասին , բայց անտի ցկաթողիկոսութիւն ասպարէզը բաւական մեծ էր : Սակայն քանի որ Նոր-Ղաթն էր Սուքիաս եպիսկոպոսի կաթողիկոսանալուն ջատագովը , մեզ համար վտանգը մեծ չէր : — Երբ Էջմիածին կը հասնէի , կը լսէի թէ նոյն օրն Մայիսի 3ի նստին մէջ զօրաւոր դեր մը ստանձնած էր Սուքիաս եպիսկոպոս : Կը պատմէին թէ Սրբազանը ջատագով հանդիսացած է Պալատէնիայի և յայտարարած է թէ՛ պէտք էր որ ի վաղուց մենք բաժնուած լինէինք Թուրքիոյ Հայերէն : Միանգամայն ըսին թէ Սուքիաս եպիսկոպոսն է որ ուժով դիմադրած է Ներսէս Սրբազանի հրաժարականի մերժմանը : — Այս եղելութիւններն կը պատմէին իբր շատ յոյժ աննդատ Սուքիաս եպիսկոպոսին . բայց կը մտածէի թէ պարսպ գլուխ մարդ լինելու չէ այն որ այսպէս համարձակ իւր կարծիքներն հրապարակաւ կը յայտնէ , երբ այդ համոզումներն այնքան հակառակ են հասարակաց կարծեաց հոսանքին . հետեւաբար կը փախազէի Նորին Սրբազնութեան հետ

տեսակցիլ : — Պէտք է խոստովանիմ որ շատ վոյթ չըրի ստուգել թէ արդ եօք իրաւ ջերմ պաշտպան եղած է Պալատէնիոյ և յայտարարած թէ սէտք էր որ Թուրքիոյ և Ռուսիոյ Հայք բաժնուին . եթէ այդպիսի կարծիք մը ունէր , ազատ էր ունենալ . բայց վերջէն ինձ ըսին թէ Սրբազանը «Մեզ» — Հայաստան»-ի մէջ հերքում տուած է իրեն վերագրուած այդ խօսքերուն : Մեզ»-ի այդ թիւը չլրացի տեսնել , ուստի ոչինչ կրնամ ըսել :

Կիրակի երեկոյին դնացի Սրբազանի սենեակն և բաւական երկար տեսակցութիւն մը ունեցանք : Սուքիաս Սրբազան տակաւին երկտասարդ կը համարուի . հազիւ թէ մօրուքին վարի մասն սկսած է մի քիչ գոյնը նետել . պատկառանք ազդող համակրելի դէմք մը ունի , բայց մի քիչ խորխոր : Բաւական պարթև և գեղեցիկ է իւր մարմնական կազմը . աւելի դէր կը սեպուի քան նիհար , աւելի մտոտ է քան ջղոտ : Համարձակ խօսի , ո՛չ կը կեղծէ , ո՛չ դիւանադիտութիւն կ'ընէ . ի հարկին կարող է յանդուգն լինիլ . մի քանի կէտերու մէջ կը նմանի Հոգեւոյն Ներսէս Պատրիարքին :

Մեր խօսակցութիւնը ի հարկէ Պոլսոյ գործոց և Կաթողիկոսական ընտրութեան վրայ էր : Սուքիաս Սրբազան առանց վարանելու յայտարարեց թէ ինքն Ներսէս Սրբազանի Կաթողիկոսութիւնը յոյժ միատակար կը դռնէ թէ՛ Էջմիածնայ և թէ՛ Ռուսիոյ Հայոց համար : — Առաջին անձն և առաջին եկեղեցականն էր որ այսպէս կը խօսէր , և ինչպէս յիշատակած եմ և պիտի յիշատակեմ Ներսէս Սրբազանի համար ըսուած ամէն լաւ խօսքերն , նոյնը պարտաւոր եմ ընել ինչ որ աննպատակ ըսուած է իրեն համար : Աննպատակ բացատրութիւններ միայն Սուքիաս Սրբազանէ լսեցի : Շատ խիստ էին Սուքիաս եպիսկոպոսի քննադատութիւններն , բայց ի սրտէ կը բղթէին : Տխուր նկարագիր մ'ըրաւ Տաճկաստանի Հայոց զանազան գործոց մասին և այդ տըխուր կացութեան միակ տատճառ . կը համարէր Ներսէս Սրբազանը և կ'ըսէր թէ՛ « Կուղէք որ ձեր տղայ Պատրիարքը Ռուսաստան բերենք որպէս զի զմեզ ալ խառնող ընէ » : — Բարեբաղդաբար Էջմիածնայ Ազդ. Ժողովը իրաւունք չտուաւ Սուքիաս Սրբազանի : — Բաւական վիճեցայ . Սրբազանը կը

յիշէր իմ դրածներէս շատ կտորներ, զորս կ'ուզէր հերքել կամ ընդունիլ: Չէի վարաներ ըսել թէ ի հարկին մենք ալ ցաւած ենք Ներսէս Արքայանի մի քանի սխալանաց և իւր բնաւորութեան թերի կողմերուն վրայ, և այս ցաւն յայտնած էի Ռուսիոյ Հայոց ճիշդ այն ժամանակներն յորում Ներսէս Արքայան վառաց դադարեցանք հասած կը համարուէր: Բայց Ներսէս Արքայանի հայրենասիրական ոգին, զանազան մեծ յատկութիւններն, լուսաւորեալ միտքն չէր կարելի մէճի ենթարկել, մանաւանդ ընդարձակ սահմանի մը մէջ Ազգին մատուցած ծառայութիւններն, ծառայութիւններ զորս Ազգը կը գնահատէր: — Կենթադրեմ թէ ես կարող չեղայ համոզել Սուրբաս Արքայանը, բայց աւելի կ'ուզէի զինքը լռել քան թէ ես զիս ըսել ըսել տալ: Կը ջանայի աւելի և աւելի զրդուել Նորին Արքայանութիւնն ի խօսակցութիւն, մանաւանդ որ խօսելու հաճոյ եղանակ մ'ունէր: Արքայան Պարզեանցը ծանօթացած է Ներսէս Պատրիարքին երբ սա 72 թուին ճանապարհորդած է ի Ռուսաստան, և այն ժամանակէն կազմած էր աննպաստ գաղափար Ներսէս Արքայանի մասին: Սակայն երբ մեր տարաբաղդ Պատրիարքը վախճանեցաւ, լսեցինք թէ Սուրբաս եպիսկոպոս զեղեցիկ հոգեհանգիստ կատարած է և սրտաշարժ տեսնարանութիւն մ'ընելով յարաստուս չարժած է ժողովուրդը: — Կատակերգութիւն մը չէր որ կը կատարէր. նա ո եւ է անձնական ատելութիւն չունէր Ներսէս Արքայանի դէմ. հրապարակական անձին թերութիւնները կը քննադատէր, և երբ գերեզմանը բացուեցաւ, քննադատութիւնը դադրեցաւ: — Ինչո՞ւ ուրիշ եպիսկոպոսներ ալ չհետեւեցան այդ օրինակին. ինչո՞ւ մինչեւ Յովսէփատու ձորն իսկ «վրէժ և ատելութիւն» կ'ուզէն գոչել:

Սուրբաս եպիսկոպոս հանդուցեալ Կաթողիկոսի ժամանակ ինչ ինչ խնդրոց մէջ հետեւած է այնպիսի ընթացքի որ կը խանգարէր եկեղեցական բարեկարգութիւնը և կը ծառայէր տկարացնելու մեր կրօնական պետին բարոյական զօրութիւնը: Այս կէտին վրայ շատ ծանրանալ չեմ ուզեր, վասնզի Սուրբաս եպիսկոպոս ինքն իսկ ըմբռնած է անշուշտ իւր մեծ սխալը, որուն

հետեւութիւնները ծանր եղած են իրեն համար:

Պարզեանց Սուրբաս Արքայան Ռուսիոյ Հայոց լաւ եկեղեցականներէն մին կը համարուի, միայն թէ փոքր ի շատէ ունեցած խրոխտութիւնը, ճիւղն լինելու անընդունակութիւնը, բաւական վրասած են իրեն: Իւր թերութեանց և յատկութեանց հաշուելիւնն ընելով, կրնանք ըսել թէ Կաթողիկոսական աթոռը մօտաւորապէս բարձրանալու յարմարագոյն եկեղեցականը չէ: Ապագային մէջ օգուտ քաղելով փորձառութիւնէն երբ ուղղէ իւր թերութիւններն, և մշակէ այն ձիրքերն զոր ունի և ընդհանրութեան սէրը գրաւէ, — վասն զի կարող է ընել, — թերեւս այն ատեն կարենայ համարուիլ Կաթողիկոսական արժանաւոր ընտրելիներէն մին:

Ա. ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

Ա Կ Ն Ա Ր Կ Մ Ը

ՎԵՐՋԻՆ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆՅ ՎՐԱՅ

(Շար. Տես թիւ 3748)

ԱՐԱՐԵԱ, ՄԵՐՎ ԵՒ ՉԻՆԱՍՏԱՆ

Պ. Շառլ Հիւպէռ որ ծանօթ էր Սրբիոյ մէջ մի քանի ճանապարհորդութեանց հետաքրքրաշարժ նկարագրերովն և որ վերջերս կրկին անդ կը գտնուէր, վերջապէս սպասանուեցաւ Պետեմիներու ձեռամբ՝ ճիտաւէն մի քանի աւուր հեռաւորութեամբ: Նորանոր պատմական արձանագրութիւններ հաւաքելու համար անցեալ յու իս 21 ին մեկնած էր. ըսել է թէ հազիւ մի քանի ամիս կայ որ զոհ գնաց իւր ձեռնարկին: Մանրամասնօրէն չգիտցուի ցարդ թէ ինչ են այս սպաննութեան պարագայներն և թէ իւր հաւաքած հնութիւնը աղատած են ու բերուած են յԵւրոպա: Սա միայն միայն թափ է որ իւր նախորդ խաղարկութեանց պտուղներն, բաղմամբիւ արձանագրութիւնք, այժմ Պ. Էռնէստ Ուլմանի քով են. ի հարկէ մօտեւս այս երեւելի գիտունը զանոնք սխալ

ներկայացնէ մեզ հանդերձ մեկնութեամբ :

Լոնտրայի Աշխարհադրական Ընկերութեան մէկ նստին մէջ Պ. Տութիլի՝ Արաբիոյ հիւս. արեւմտեան կողմն և ի նէճէտ ուղեւորութեան նկարագրին ընթերցումը տեղի ունեցաւ : Ուղեւորութիւնը տեղի ունեցած էր երկու տարի առաջ, սակայն տակաւին չէր հրատարակուած : Երկու բառով ըսենք թէ՛ ինչ օգտակար նիւթ կայ սոյն պատմութեան մէջ : Ուղեւորը լած էր թէ Սիւրիոյ ուխտաւորաց ճանրուն վրայ դէպ ի հարաւ տասնօրեայ ճանրու հեռաւորութեամբ հնաւուրց չէքեր կան : Հաճի կերպարանք մտած Դամասկոսի կարաւանին մէջ մտաւ և երբ հասաւ ուղած տեղը, ոչ նուազ դժուարութեամբ թողուց և բաժնուեցաւ իւր ընկերներէն : Անդ կարող եղաւ ուսումնասիրել այդ կաւէ շինուած չէքերը և օրինակեց 200 հատ արձանագրութիւնք : Յոսանք որ կ'օգտուինք :

Բայց այս չքաւեր : Մի քանի Պեանկի գլխաւորներու հետ բարեկամանալով դէպ ի արեւելք ուղեւորեցաւ և նէճէտի մէջ ու շրջակայքը այնպիսի տեղեր այցելեց որ անձանօթ էին ցարդ աշխարհագրտաց : Ի մէջ այլոց նոր գետ մը գտաւ, Ուատի-Էլ-Հուսթ կոչուած, որոյ ճանքան դժեց և որոյ ծնունդն Թայֆի մօտերն ըլլալը ստուգեց : Այս գետ ի Կարմիր ծով կը թափի (Էլ-Ռէճի և Եամպի միջեւ) : Այլ հետաքրքրական մասեր կան իւր նկարագրին մէջ : Պ. Տութիլ չէր ծածկեր իւր անգլիացի ըլլալն, ոչ ալ քրիստոնեայ ըլլալն և այս պատճառաւ մեծամեծ վտանգներու հանդիպեցաւ : Խայպարի մէջ իբր ուս լրտես բանտարկեցաւ և քիչ մնաց որ սպաննուէր ի Մէքքէ հասած ատեն, ուր կեանքն ազատեցաւ չնորհիւ Մէքքէի Շէրիֆին, որ զինքն առօք ժառօք ձէտտա զրկեց : Ընդհանուր կերպիւ իւր կըրած տպաւորութիւնն է թէ Արաբիան նախապատմական կարեւոր հնութեամբ լի է, և գլխաւորապէս գերեզմաններու վրայ կառուցեալ գեղեցիկ չէքերով : Սակայն չը մոռնանք յիշելու որ բոլոր պատմական չէքերու մէջ չկան այնպիսիք որ հնութեան մասին կարենան մրցիլ եգիպտականներուն հետ :

Բրոֆէսէօր Ճիւլիւս Էօթինկ եւս Պ. Տութիլի ուղեգծին հետեւեցաւ և նորա նման

հաւաքեց զանազան արձանագրութիւններ : Բայց չէ կարելի ամենքն ալ աստ պատմել. ամբողջ Մասն չքաւեր :

* * *

Թիւրքիստանէն անցնելով, անդ կը տեսնենք ուս ուղեւորներ որ երկիրը կը հետազօտեն և դուցէ աղագայ աշխարհակալութեանց համար հայրենասիրական աշխատութիւններ կը կատարեն : Ինչ եւ իցէ, թող աշխարհագրութիւնը օգտուի այս ամենէն՝ եթէ այս մարդիկ իրենց չահուն համար միայն կ'աշխատին : Առ այժմ կ'սպասենք Պ. Ութէլի խուղարկութեանց արդեան որ վերին Օքսուսի անձանօթ կողմերը կը թափառի :

Առ այժմ խօսինք Պ. Լըսսարի ուղեւորութեան վրայ, որ անդրկովկասեան երկիրներն և Մերվը կը նկարագրէ : Թէպէտեւ Մերվ գրաւեալ է այժմ Ռուսաց կողմանէ, ինչպէս ծանօթ է ամենուս, սակայն Պ. Լըսսարի անգլեկութիւնք՝ դրաւումէն տարի մը առաջ լինելով հանդերձ՝ արժանի են մեր ուշադրութեան :

Մերվցիք, զորս Պ. Լըսսար 1882 օգոստոսին տեսաւ, ճշմարիտն ըսելով ազգ մը չեն, այլ պարզապէս աւաղակաց խումբ մը, որ մի միայն աւարառութեանց համար առժամեայ կերպիւ կ'ընկերակցին և որք սովորաբար անիլլան ու անհամաձայն կ'ապրին : Բայց զարմանալի է որ մի միայն Մուրղապի ջրանցքին համար միաձայն են և անոր պատճառն է այդ ջրանցքին էութիւնը իրենց համար կենսական խնդիր մը ըլլալը, ինչու որ առանց ագոր ամբողջ ովախը ծարաւէն կը մեռնի : Երկու ցեղեր կան, Օբսալք և Թէթսալք, որք իրենց խաները կ'ընտրեն. բայց բնակչաց ոմանք միայն կը մասնակցին այս ընտրութեան, ուր պէտք է մի քանի սլխար նուիրել ընթրիք մը տալու համար : Արդէն խանին տիտղոսը բոլորովին անուանական է և իշխանութիւնն ալ ոչինչ :

Մերվցիք ծոյլ են. մի միայն իրենց անմիջական պիտոյից համար պէտք եղածին չափ կը մնակեն : Վաճառականութիւննին նուազ է, ինչու որ Պոլսաբայի և Մէշէտի ճանրայները ենթակայ են Սարըղի և Էրսար-Պաղարի խրոխտ գրաւորներու յարձակմանց : Ունին տօնավաճառ, բայց սպրանք կը սլակին : Միայն մի քանի միովանակու-

Ընտանեկան վեճեր որք հետզհետեւ կը ծագին և չորս հինգ ամուսնական խնդիրներ մանաւանդ որք վերջին օրերս երեւան դալով այս տողերը գրելու կը մղեն զմեզ : Քանի՜ նե՛ր արդեօք իրենց կացութեան դառնութիւնն այլ ևս չկրնալով տանիլ, անվերջանալի դժտութեանց և ընտանեկան կռիւններու դուռ կը բանան և ընտանեկան յարկն, որ իրնար, ուրիշ պայմաններու տակ, դըրախտ մ'ըլլալ՝ կազ ու կռիւներու, խէթ ու մախանաց թատր կը հանդիսանայ : Եւ քանի՜նե՛ր դարձեալ, որք, առ ամօթոյ և առ երկիւղի անուանարկութեան, անտրտունջ ու լուրջեայն կը ճաշակեն դառնութեան բաժակն :

Աւելին կայ . կանուխէն՝ ի տղայ տիոց նշանելու անպատեհութեանց պատմութիւնն ասով չվերջանար, և կրնայ, ասուսնութենէ առաջալ, երկու ընտանեաց մէջ փոխադարձ ատելութեան, դժտութեան և վեճի որով ցանկ . օրինակներ չատ կան . մէկը միայն յիշէ բաւական է, որ երկու ամիսէ հետէ մաքերն կը պաղեցնէ աստ . 10-15 տարիէ ի վեր խօսեցեալ մանչ և աղջիկ, քաղաքիս հարուստ դասակարգէն, այժմ յարգուեա հասած, իրարմէ բաժնուելու հարկին տակ կը դնուին : Այս խզման պատճառներն ո՞րոնքու միտք չունինք . համարեա՛ մանչուն անյարմարութիւնը, համարեա՛ աղջկան ծնողաց յամուսնութիւնը . բայց վերջապէս խզողումը կատարեալ իրողութիւն մ'է և այդ երկու ընտանեաց ու անոնց պարագայից մէջ անհաշտ ատելութիւն ու դժգոհութիւն ակներեւ է : Ձերկարենք . սպասելով որ առողջ կրթութիւն ու դաստիարակութիւն վերջ տան այս ընկերային գեղմանց, մեր Ս. Առաջնորդաց և ազգ. իշխանութեան անկ է՝ միջոցներ ձեռք առնուլ որպէս զի ընկերային այս կենսական խնդիրներ բարւորք եղանակներով յարգադրուին և արգիւլել անտիական հասակէն նշանտուութիւնք որք, մասնաւորապէս մեր քաղաքին համար խօսելով, վստ հետեւանքներ ունենալ սղջսած են :

Ս. ԴԱԽԻԹԵԱՆ

ՆՈՐԱՎԷՊ

ԲԱՍՔԱԼԻՆ

Երբոր Կլորիանի նկարչութեան արհեստանոցը մտայ, տանեւեօթն տարեկան էի : Հայրս նոր մեռած էր : Գիտես որ իշխանապետն չեմ, և չպիտի խօսիմ քեզ իմ բարձր տոհմիս վրայ : Հայրս կենաց ասպարէզը թեւակոխած էր իբր մեքենագէտ գործաւոր . տաժանելի տարիներէ յետոյ գործարան մը հաստատած էր, այլ չյաջողելով, նորէն գործաւոր եղած էր : Ինձ թողուց միայն քաղաքին դպրոցներուն մէջ կատարուած դաստիարակութիւն մը, փոքրիկ կահ կարասի և երեք հազար Փրանքի դրամագլուխ, որ իմ մօր, մէս կուգար, մօրմէս որ մեռած էր առանց ես զայն ճանչելու : Երեք հազար Փրանք ութն կամ տաս տարուան մէջ փոքր վաստըկելու համար, քիչ էր : Իրաւ է որ Բիքարտից մէջ ազարակապան հօրեղբայր մ'ուներ, որ առաջարկեց ինձ իւր քով առնուլ զիս և նայիլ իւր միւս տղայոց նման, բայց ես մերժեցի . կ'ուզէի նկարիչ լինիլ : Այս քմահաճոյքը կամ այս կոչումը, — ընտրէ՛ ուզած բառդ, — ինձ ներշնչած էր մեր դրացին եղող բարեսիրտ մարդ մը, կենդանադոց նկարիչ, որ, յաճախ իմ խաղալ տեսնելով հասարակաց դաւթին մէջ, անգամ զիս իւր տունը տարած էր, որպէս զի իբր օրինակ ծառայեմ Հանրապետութեան փոքրիկ թմրկահարի մը համար՝ ճակատամարտի հռչակաւոր պատկերի մը մէջ, որուն կ'աշխատէր տասն տարիէ ի վեր և որուն վրայ կը խօսէր քսան տարիէ հետէ : Հաճելի թուած էի իրեն . ստէպ գացի տեսնել զայն, իւր վրձինները լուալով, իւր երանգապնակը մաքրելով, թաղին մէջ իւր մանր մուկն պէտքերն հոգալով, և վերջ ի վերջոյ քիչ մը գլխադրութիւն սովորեցուցած էր ինձ, քիչ մը խոսելէն և բաղմոթիւ երկիմաստ կատակաբանութիւններ : Երբոր տեսաւ որ ես որոշած էի նկարչութեամբ պարապիլ իմ հօրըս մահուանէ վերջ, գլխաց իմ վրայ :

— Քեզի յանձնարարական նամակ մը տամ Կլորիան բարեկամիս համար, ըսաւ ինձ :

Իմ ծերունի քարեկամիս յանձնարարու-
թիւնը լաւ ընդունելութիւն գտաւ և Ալ-
բիան ըստ ինձ, բաւական չնորհալիր կեր-
պով, թէ կրնայի, առանց բան մը վճարե-
լու, իրեն քով աշխատել որչափ ժամանակ
որ ուզէի :

Իւր արհեստանոցն յայնժամ իւր կատար-
եալ պայծառութեան մէջ կը գտնուէր .
վաթսունի չափ աշակերտներ արձանագը-
ւած էին: Հինգ վեց հոգի լրջօրէն կ'աշխատե-
ին. մնացեալները բաւական բարձր ընտան-
եաց զաւկներ էին, որք նկարչութեամբ կ'ըզ-
բաղէին՝ քանի մը տարի Փարիզ անցընելու և
իրենց ոչնչութիւնը ծածկելու համար արուես-
տագէտի անուան ներքեւ: Արհեստանոց
մտայ այնպէս ինչպէս մարդ առաջին անգամ
պատերազմի կ'երթայ, այսինքն երկիւղով
և հպարտութեամբ խառն ուրախութեամբ
մը: Անչորհ ձեւեր ունէի և դէշ կերպով
հաղուած էի, ուստի ծաղրեցին զիս: յետոյ
վերակացուէն իմացան թէ բան մը չէի վճա-
րեր, և արհամարհեցին զիս. մէկ խօսքով,
իրենց ծառայն դարձայ: Տարի մը չափ,
կ'երդնում թէ գիշերներն աւելի լալով ան-
ցուցած եմ քան քնանալով. վերջապէս, ես
զիս կը միտնայի անդադար կրկնելով թէ
օր մը անոնցմէ աւելի տաղանդաւոր պիտի
լինէի, և այս յուսով եռանդաւոր կ'աշխա-
տէի: Երբոր մեկնէր այն կիճն, որ իւր օ-
րինակ մեր դէմ կը նստէր, կ'երթայի աշ-
խատիլ ի Լուվր կամ յ'աթամբ, և իրիկունը,
ժամ վեցէն մինչեւ տաս, Սէն-ժընըվիէվի
մատենադարանն: Ասի տեւեց չորս տարի:

Այս չորս տարիներու միջոցին, երկու
հազար ֆրանք միայն ծախսած էի, ուստի
տարակոյս չկայ թէ քսակս յոյժ պարարտ
չէր. բայց կարեւոր բանը սա էր թէ վար-
պետին նախամեծար համարած աշակերտ-
ներէն էի, և գրեթէ ամեն չաքաթ, մեր
օրական սովորական աշխատութենէն զատ,
այլ և այլ նկարներ ցոյց կուտայի իրեն, ո-
րոց յոյժ պարզ կամ ողբերգական նիւթերն
առգիշն անդիշն գտած էի. ինչպէս, մայր մը
որ իւր զաւկին կամ իւր տայ, կամ պառտու
կին մը որ մէկ ձեռքով իւր մերկ աղջիկը
ծերունեոյ մը թեւերուն մէջ կը մղէ, և միւ-
սով քսակ մը կ'ստանայ, գին այդ անարդ
ու պիղծ սակարկութեան: Ես ալ աշակեր-
տաց պարագլուխներէն մին եղած էի. վեր-

ջապէս կեանքը երջանիկ գտնել կ'սկսէի .
հաւատք ունի ապագային վրայ:

Մարտ ամսուան օր մը, — հո՞ս է որ ու-
շադրութիւնդ կրկնապատկելու ես, — մարտ
ամսուան օր մը ամենքս ալ կ'աշխատէինք,
երգելով, ծխելով, սին ու աղտոտ խօսքեր
ընելով. օրինակը սեղանին վրայ նստած էր
բոլորովին մերկ, և վառարանը, մինչեւ խո-
ղովակին կէսը կարմրած, կատաղաբար կը
չառաչէր. դուրսը, սարսափելի ցուրտ կայր:
Կեռակիթիթ աղջիկ մը ներս մտաւ:

— Ո՞վ կ'ուզէ, հարցուց մեր մէջէն այն
որ դրան մօտ կը գտնուէր:

Ամենքս ալ դուռնին վեր առինք կար-
ծելով թէ տարիուհի մ'էր որ կուգար սի-
րահարը փնտռել, և հետաքրքիր դիտնալու
համար թէ որո՞ւ պիտի դիմէր:

Մանկամարդ աղջիկը քանի մը բառեր
թոթովեց զորս չլսեցինք, և այն որ զնա
կեցուցեր էր, պատասխանեց նմա վերակա-
ցուն ցոյց տալով:

Վեհերոտ կերպով յառաջացաւ նա
պատկերակալներուն և աթոռներուն մէջտե-
ղէն դէպի վերակացուն, որ զայն լսելէ յե-
տոյ ըսաւ.

— Պարոնայք, օրիորդը կը խնդրէ իբր
օրինակ ծառայել:

— Պէտք է զայն տեսնել, ըսին քանի մը
ձայներ:

Մաղկահասակ աղջիկը չհասկնալ կը
թուէր:

— Իբր օրինակ ծառայած չէ՞ք երբէք,
հարցուց վերակացուն:

— Ո՛չ, պարոն:

— Յայտնի կ'երեւայ. զձեզ ընդունելէ
առաջ, այս պարոնայք կը խնդրեն զձեզ
տեսնել:

Երիտասարդ աղջիկը չպատասխանեց:

— Արդեօք չէ՞ք հասկնար:

— Բայց... պարոն...

— Զուտ'կո, չենք կրնար գրեզ ընդու-
նիլ առանց ճանչելու. իրաւ է թէ սիրուն
դուռն մ'ունիք, բայց, վերջապէս, ոչինչ
զմեզ կ'ապահովցնէ թէ մնացեալը... Այս
տեղ մեք մարդ չենք, այլ արուեստագէտ .
եթէ կ'ուզէք իբր օրինակ ծառայել, պէտք
է մերկանաք և սեղանին վրայ ելնէք: Մարիա՛,
տեղ տուր օրիորդին և դուռն քիչ մը տաք-
ցիր:

Օրինակը վար իջաւ . բայց նորատի աղ-
ջիկը չչարժեցաւ : Իւր թալկահար երեսը
կեռասի գոյն առաւ . վերջապէս , քանի մը
քայլ ետ գնաց որպէս թէ մեկնիլ ուզէր ,
պահ մը վարանեցաւ , յետոյ , վերադառնա-
լով , իւր շալը մէկ կողմ նետեց , յամրաբար
քակեց իւր չրջագդեստին կոճակներն , և մի
առ մի , աչերը դետին խոնարհած , բոլոր
հանդերձներն հանեց : Գիւղուածաւ , իւր
քով կը գտնուէի . ձեռքս իրեն տուի որպէս
զի օգնեմ սեղանին վրայ ելնելու . և թեւե-
րը խաչաձեւ իւր կուրծքին վրայ , գլխիկոր,
չրթները դողդոջուն , ոտքի վրայ մնաց եր-
սուն հայեցուածներու մէջտեղ որք կը քնն-
նէին և կը դատէին զնա :

— Որոշ բան չունի , կ'ըսէին ոմանք :

— Թերահարթութիւն չունի , կ'ըսէին
այլք :

— Թեւերը կարճ են :

— Գլուխը մեծ է :

Գեռատի աղջիկն հագիւ տառնեւիկեց տա-
րեկան էր . խարտիչադեղ մազեր ունէր , և
երկար ու խիտ բիբերով կապոյտ աչեր :
Գլխուն ձեւը կատարելապէս ձուածեւ էր ,
մարմինը թարմ , առողջ և վարդագոյն , այն-
պէս որպէս ես տեսած չէի երբէք :

Սեղանէն վար իջաւ :

— Ի՞նչպէս կը կոչուիք , հարցուց վերա-
կացուն :

— Բասքալին :

— Լաւ ուրեմն , օրիորդ Բասքալին , յա-
ռաջիկայ շարժու կրնաք գալ , ժամ ութին :
Բասքալին հագուեցաւ : Իւր արդուզար-
դը երկար չտեսեց . կերպասէ փոքրիկ պա-
րեգօտ մը , չալ մը և պարզ չրջագդեստ մը ,
բայց սպիտակ ձերմակեղէն , բան մը որուն
բնաւ վարժուած չէինք : Յետոյ դուրս ելաւ
չնորհակալութիւնն յայտնելով մեզ :

Յաջորդ երկուշաբթի օր , ամենէն առաջ
գնացի լաւ տեղ մը գրաւելու համար : Ա-
նուն տախտակին վրայ գրելու կ'գրաղէի ,
երբ Բասքալին ներս մտաւ :

Վատարանին քով գնաց , իւր թրջած
ոտքերը չորցուց : Իրեն մօտեցայ և , թէեւ
պէտք չունէի , սկսայ տաքնալ :

Այն ատեն աչերն իմ վրայ բարձրացնե-
լով ,

— Պարո՛ն , ըսաւ թարմ ու քաղցրիկ
ձայնով մը , կը բարեհաճէի՞ք ըսել ինձ թէ
ի՛նչ պիտի ընեմ :

— Յոյժ պարզ է , օրիորդ . պէտք է ան-
չարժ կենաք այն դիրքին մէջ զոր ձեզ պի-
տի տան :

— Անցեալ օրուա՞ն նման :

— Այո՛ , անցեալ օրուան նման : Մի
ստակաք , ըսի իրեն կարելի եղածին չափ
չափ քաղցր կերպիւ : Եւ սկսայ իրեն պատ-
մել թէ արուեստը մտքուր և սուրբ էր , թէ
արուեստին մէջէն միայն պիտի տեսնէինք
զինքն , վերջապէս մաքրագոյն և ազնուա-
գոյն գեղեցկագիտութեան բոլոր առաս-
պելները :

Աչակերտները ներս կը մտնէին . իսկոյն
լռեցի և սկսայ կտաւս պատրաստել : Տա-
կաւ առ տակաւ հասան . երբ ամեն ոք իւր
տեղն ընտրեց , սկսանք աշխատիլ : Ես ա-
ռաջին կարգը կը գտնուէի , Բասքալինի ճիշդ-
դիմացը : Շնորհակալ այլ դժնդակ դիրք մը
տուած էին նա . յոտին , մարմինը կամա-
րածեւ , կուրծքը դէպ յառաջ տնկած , ձեռ-
ները խաչաձեւ գլխուն վրայ : Հէք աղջիկն
ընդունած էր , բայց տասը վայրկեան չկար
որ իւր տեղը կը գտնուէր , արդէն քսան
անգամ շարժած էր , և ամեն կողմերէն ,
միահամուռ , առաւել կամ նուազ քաղցրու-
թեամբ չեչուած ձայներ բարձրացած էին .

— Դիրքերնիդ կը կորսնցնէք :

— Ո՛հ , մի շարժիք :

— Գլուխնիդ քիչ մը վեր վերցուցէք :

— Թեւերնիդ մի՛ կախէք այդպէս :

Թշուառ աղջիկը կը ջանար ամենուն
հնաղանդիլ , բայց կ'սկսէր չգիտնալ թէ ո-
րո՛ւն անսայ . իւր աչերը լի էին զսպուած
արցունքներով : Արդահատեցայ :

— Այդ դիրքն անկարելի է , ըսի բա-
ւական անուշութեամբ , այլ միանգամայն
հաստատութեամբ . այդ դիրքը չափաւ տա-
յիք մեր ամենօրեայ կիներէն միոյն , և
կուտաք զայն նոր սկսող աղջկան մը :

Քանի մը հողիներ ինձ աջակցեցան .
դիւրատար կեցուածք մը տուի Բասքալինի ,
աթուակի մը վրայ նստած զոր բաղէնովս
ծածկած էի , գլուխը դարձուցած դէպ ինձ :
Նորա մերկ թեւերը բռնելով , զգացի որ
ցուրտ էին և կը դողային . բոլոր արիւնը
սրտին մէջ կանդ առած էր . չէր գիտեր
թէ ի՛նչ կ'ընէր :

Վերսկսանք աշխատիլ : Բասքալին աչերն
իմ վրայէս չէր վերցնէր . պաղատող և ե-

բախտագէտ միանգամայն, խորհուրդ և նեցուկ կը խնդրէր ինձմէ: Կը քաջալերէի զայն, կ'օգնէի նմա, և առանց համարձակելու ինձ ժպտիլ, քաղցր շնորհակալութիւն մը կը կարգայի իւր ակնարկին մէջ:

Նախաձառի տառն, աւելի երկար հանգիստ մ'ունեցանք. ոմանք ճաշարան դընացին. այլք, և ես ասոնցմէ էի, մնացին՝ իրենց հացն ուտելու համար վառարանին շուրջը: Բաքալին, իւր շալին մէջ փաթթեալ, մեր մէջտեղը կը գտնուէր: Երկու երեք հոգի իրեն հետ կը խօսէին, և ինք քաղցրիկ իմն կը պատասխանէր: Ըստ որում չէր ուտեր և կը տեսնէի որ հետը բան մը բերած չէր, իմ հացիս կէսն իրեն տալ առաջարկեցի. նախ և առաջ մերժեց, այլ վերջապէս ընդունեց:

Կէս օրին, վարպետը եկաւ: Բաքալին հաճոյ թուեցաւ իրեն. սիրուն դտաւ զայն և քանի մը մեծարանքներ ըրաւ:

Այն ատեն յետագարձ աղղեցութիւն մը եղաւ արհեստանոցին մէջ. իմ գեղադէմ ընկերներս որք անտես ըրած էին զԲաքալին որովհետեւ իրենց ժողատ տարփուհիներուն պշտողութիւնը չունէր, սկսան հրապուրիչ յայտարարել և շրջապատել զայն. — վարպետը խօսած էր:

Այդ յանկարծական փոթեաւորութիւնըն ուրախութեամբ չդիտեցի. բայց, ըստ որում մեկնելու ատեն վերջին անգամ ինձ ժպտեցաւ, շուտով մխիթարուեցայ, և Լուս վեր երթալու ատենս այնքան երջանիկ ու բերկրապատար էի, որ դէմս ելնող անձանց կը զարնուէի: — Ձիս այսպէս տեսնողն անաւարակոյս պիտի հասկնար թէ սէրն իջած էր սրտիս մէջ:

(Մնացեալ յաջորդ Բառով)

ԷՔԹՈՐ ՄԱԼՈՅ

ԳՐԱԿԱՆ

« ՀԱՄՈՎ—ՀՈՏՈՎ »

Իւր ընկերական բարձր դիրքով և գրական մեծ տաղանդով հանրածանօթ ազգային մի հետեւեալ նամակն ուղղած է Գեր. Գարեգին Վ. Սրուանձտեանցի՝ իւր Համով—Հոտով երկասիրութեան համար.

Հայր շնորհախալ,

ՇԱՏ դաւաճին մէջ ծնաք որ այդքան շատ ունիք եռանդ և աւելն, և այն ո՞ր չափ բան դիտէք հայութեան վերաբերեալ: Կը չըջիք, կը չըջիք ու միշտ նոր բան մը կը գտնէք. նոր համ մը կ'առնուք. նոր հոտ մը կը բուրէք:

Ձեր դրկած գիրքն է իրաւցնէ համով հոտով լիք, համն անուշակ՝ Արտամեոս խնձորին, վափուկ կաթնորակ, հոտն անուշահոտ՝ ուռցուն, դաղձուն, ձիթէնուոյն:

Ձեր ոճին մէջ՝ Հայոց կռապաշտական դարերուն մագութիւնն ու դիւթութիւնը կայ. ձեր զգացումներն ու մտածութիւնները՝ քրիստոնէական դարերուն սրբութիւնն ու կուսութիւնը ունին:

Գլղարցող առուներէն, խոնաւ հողերէն, թուփին ու տերեւին մէջ սօսափող հովէն, կը քաղէք արտօսք ու հառաչ—մնջիկ աղաւնւոյն աղու միմունջներն. աղու Նղիշեայ նախանձընդդէմ պայքարաւ:

Դուք ոչ իբրեւ բնագէտ ու բնալոյծ կը պտըտիք ու կը դատէք ծառն ու քարը, հողն ու ջուրը. դուք հոգի կը տեսնէք ամեն բանի մէջ. և եթէ բան մը հոգի չ'ունի՝ դուք հոգի կ'առաք անոր:

Այիշանէն ու Հայրիկէն ետքը մեր հայրենեաց վայրերուն վրայ գրուած բան մը չը կարգացի այնքան ախորժանօք որքան ձեր գրութիւնքը: Բայց Այիշանն ալ, Հայրիկն ալ, դուք ալ, և ուրիշ քանի՞ բանաստեղծներ, չէ՞ք նմանիր արդեօք այն աղջկան, որուն Աստուած թեւեր տուաւ. թռիչ առաւ ու դեռ կ'երգէ ու կը կանչէ օդերուն մէջ. «Սը՛հա՛կ, Սը՛հա՛կ, Սը՛հա՛կ...»:

Ես Ձեզ ի հերուն հետէ կը ճանչեմ. դուք փոքր էիք. փոքրաւորն էիք Հայրիկին. ըսի թէ հանճարաւոր ոմն պիտի ըլլաք. եղա՛ք. շնորհակալ եմ:

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆ

Սա անծանօթ մի լեզու է,
Զոր կը խօսին հողմերն յեթերս,
Շանթն ու փայլախն՝ ամերեւուն մէջ,
Ալիք՝ մանչուհիս ի ծովեղերս,
Լուսաբոցը և պայծառ արփին,
Աստղն ննջող վերայ հովիտին,
Նուաստեաց երգն՝ որ ի հեռուն,
Հորիզոնն՝ որ սուղի յանհուն,
Երկնականարն՝ որ կը ցոլայ
Ալեաց ծփուն բերեղին վրայ:

Ծովեղին՝ ուստի կ'արշաւէ լոյս,
Լեռներն՝ որոց ետեւ արփին
Կ'իջնէ, փայլուն ձիւնն, վերջալոյս՝
Որ կը մարի յետոյս բերդին,
Զայնն՝ որ կ'իջնէ և կը նուաղի,
Պորն՝ որ կ'անուռ թիւ կամ կ'լողի,
Եւ սօսափին սեւ սեւ նոճեաց,
Հնամի տաճարը՝ որը ի բլրին,
Եւ յիշատակք աւերակաց,
Եւ լուծիւն խոր անտառին:

Խաւարն ստուար, որ կը դիպուի
Լեռանց վրայ՝ երբ լոյս տայ խոյս,
Ժխորն ահեղ՝ որ կը լսուի
Քաղաքներէ աղմկայոյզ:
Բոյլ բոյլ աստեղց գողգող շողերն,
Աւազաստից մանչող հովիտն,
Շանթ ու սոսկումն իւր ահաւելի,
Եւ անապատք, մերկիք, գիշեր:
Այս ձայներով կոշտ ու վայրի
Կը խօսի զքէն այդ լեզու, Տէ՛ր:

Զքէն, Աստուած, էակաց Լն,
Ճշմարտութիւն, կեանք, յոյս և սէր,
Զոր փնտռել և ճանչել կ'ուզեն
Լոյսն ու ցերեկ, մութն ու գիշեր,
Զոր կը կարգայ ձայն ամենայն,
Զոր կը յայտնէ բնութիւնն համայն՝
Սակայն հասու դեռ եղած չէ:
Զոր աշխարհս այս կը հռչակէ
Աղբիւր, անդունդ, ովկէան հոգեղն,
Եւ ոյր անուն է լոկ Անհուն:

Վանդերուդ ձայն, ո՛վ վրասմ՝ լեզու,
Մեր լսելաց միշտ կը հնչէ

Զաւերելիս վրայ, բայց կարող է
Եւ իմաստին լինիլ հասու:
Սակայն բոցի մեր հոգին նուրբ
Պարտէ ճոցա գործունէն սուրբ,
Այս աշխարհէս կը ձայնարկուի:

Վրասն բեռ մը կը ծանրանայ,
Ի՛նչ պիտուհետեւ տխուր մի կեանք
Նորա համար են լոկ հեշտանք:

Որպէս, երբ մեր տէր տկար՝
Արեւմտեան ի հորիզոն
Յառեալ՝ դիտեն լուսարորբոք
Գունդն արեգի, որ վառի հոն,
Շլացեալ նորա ի բոցակէզ
Տեսոյն՝ կ'իյնան անմիջապէս
Այլուր, գրեթէ զրկուած լոյսէն,
Եւ այլ եւս կը նշմարեն
Խօշ ստուերներ, ունայնութիւն,
Աղճամուղջ և ոչնչութիւն:

Ո՛վ Տէ՛ր, լսել ինձ շնորհեցիր
Զայդ ձայն և կամ դաշնակութիւն:
Մերթ հիասքանչ և գողտրական
Եւ մերթ տխուր մահահանգոյն:
Տէ՛ր, հոգիս այն օրէն ի վեր
Կը խօսակցի բոցոյն, ալոյն,
Մըրկին հետ և գիշերոյն:
Սորա մի բառն է մի՛ պատկեր:
Ես այդ լեզուն կամ ի պատկառ,
Որոյ խօսքերն ձայն մ'է կամ բառ:

Թարգմանեց

ԼԱՄԱՐԹԻՆ

Յ. ԹԱԹԱՐԵԱՆ

ԶԱՆԱԶԱՆՔ

ԵՐԿՈՒ ԺԱՄ

ՄԱԶԱՍԻ ԲԱՆՏԻՆ ՄԷՋ

Յիկարօի վերջին թիւերուն մէջ կը գտնենք հե-
տեւեալն որ հետաքրքրական տեղեկութիւններ կը
պարունակէ Մազասի կեդրոնական բանտին մէջ ի-
րենց հարցաքննութեան ու դատապարտութեան ըս-
պասող նշանաւոր գողերու և ռճաբործներու վրայ:

Փարիզու ոստիկանապետ Պ. Մասէ Ժա-
մադիր եղած էր ինձ ի Մազաս դէպ ի ժամ
երեքին միջոցները: Ամեն երկուշաբթի, ոս-
տիկանութեան պետն այդ բանտը կ'երթայ,
ուր կարգաւ կը հարցաքննէ այն ամբաս-
տանեալներ որոց հարցաքննութիւնը դեռ
չէ աւարտած: Երկուշաբթին յատկացու-
ցած է այդ գործին, վասն զի այդ օրը
դատարանը գոց են եւ դատաւորք կը
հանդէսին: Պ. Մասէ՛ միջօրէն յետոյ Մա-

զգաս երթալով ժամանակի կորստեան եւ տեղափոխութեանց առաջըը կ'առնու, և մանաւանդ փոխտեան վտանգներու :

Սովորաբար ոստիկանապետը քարտուղար մ'ունի իւր հետ, բայց այդ օրն առանձին էր, որպէս զի գաղտնի մնար իմ ներկայութիւնս, որոյ նպատակն էր լուսաւորել սը-խալանք մը զոր ինք եւս ի սրտէ կըղձար պարզել :

— Շատ հետաքրքրական բաներ պիտի տեսնէք, ըսած էր ինձ : Եւ խօսքն ալ ե-լաւ : Չպիտի մոռնամ բնաւ անդ տեսած-ներս զորս սղաղրական ճշդութեամբ ի գիր առի վերադարձիս :

Վախնալով որ մի դուցէ սպասցունեմ բարեկամս, որոշեալ ժամէն քիչ մ'առաջ գնացի : Միջօրէին ճիւղ ժամն երկուք ու կէսին Մաղասի միջնադռնէն ներս մտայ :

Ինձ ըսին թէ Պ. Մասէ եկած էր արդէն եւ բանտը մտայ սանդխադլիսէ մը, որ փակին մէջ տեղը կը գտնուի, մեծ դրան ճիւղ դիմաց : Ներսը, այդ սանդխադլիսին սեամբին վրայ, վանդակապատ մեծ չրջափակ մը կայ ուստից բանտապահը արթուն աչօք կը դիտեն այդ փեթակին շառաւիղները կազմող երկար նրբանցքները :

Աջ կողմի առաջին սրահը ցոյց տուին ինձ : Հոն սպասող պահապանը դուռը հը-րեց և նշմարեցի զՊ. Մասէ : Այն խու-ցըն ուր սովորաբար երկուշաբթի օրերը կը նստի ոստիկանապետը, փոքրիկ է, և բակին վրայ նայող միակ պատուհան մ'ունի որոյ վերին չրջանակը շարժուն է : Խու-ցին կարասիքը կը կազմեն փայտեայ սպի-տակ սեղան մը՝ պատին դէմ դրուած, դէ-պի ձախ կողմ, և յարդէ երեք աթոռներ :

Սեղանին վրայ կանթեղ մը կախուած է, զոր կը վառեն երբ մուտը կ'օխէ :

Պ. Մասէ կարճահասակ մարդ մ'է, գրե-թէ քառասուն և հինգ տարեկան . եր-կար և նիհար դէմք մ'ունի, լերկ ճակատ մը, և երկար մազեր դէպի ետեւ ձգուած՝ ուսուցիչներու և բանաստեղծներու նման . նրբաթել ակնոցին ներքեւէն կապոյտ, խո-րաքնին և փայլուն աչքերը գոգցես կայ-ծեր կ'արձակեն մերթ ընդ մերթ . անայլ և հակիրճ խօսուածք մ'ունի, առատաբան և սահուն :

Պ. Մասէ մեծ դիւրութեամբ կը խօսի, ընտանի ոճով մը, և իւր բարեկամական համարձակ խօսուածքին մէջ, ուղած բանը միայն ըսելու յատկութիւնն ունի :

— Գոհ եմ որ եկաք, նստէք և մտիկ ըրէք, յիշելով սակայն թէ պէտք է մոռնաք ի՛նչ որ անցնի դառնայ աստ ձեր առջեւ : Գարտուղարս ճանբեցի դիտմամբ որպէս զի բոլորովին առանձին մնանք :

Եւ մատուց ցոյց տալով ինձ թղթերու պարութայ մը զոր առջին դրած էր,

— Աւասիկ, ըսաւ, այս օրուան գոր-ծերս : Երբ ասոնք աւարտեմ, ձեր մարդը բերել պիտի տամ, պիտի խօսիմ հետը, և եթէ իրաւունքը ձերն է, վաղն առաւու իսկ կ'արձակեմ զայն :

Ոստիկանապետին մէկ նշանացի հրամա-նին վրայ, բացուեցաւ դուռն՝ որոյ վրայէն ծակ մը բացուած էր, ուսկից կրնար տես-նել դուռն սպասող պահապանը, և բան-տարկեալ մը մտաւ ներս :

Կարճահասակ և գիրուկ երիտասարդ մ'էր, կեղտոտ բաճկունակ մը հագած, գի-տախօս մաղերով, նորածին շան ակոյ-ներով, ամարդի և հեղ կերպարանքով ի մի բան գործաւորի տիպար մը, որպէս կը տեսնուի ժողովրդական գրուցերգութեանց (Ֆեդայի) մէջ :

— Նիւս տեսնենք, Թորքէ, դո՛ւ ալ Շէրշ-Միտի փողոցի գործին մէջ մաս ու-նիս եղեր :

— Ձեմ դիտեր, պարոն Մասէ, մինակ իմացայ որ այս ինչը (անունը չեմ յիշեր) գլուխ կեցած էր :

— Սակայն գուբորովին անձանօթ չեա այս տեղ . քանի՞ անգամ դատապարտու-թիւն կրած ես :

— Նրկու անգամ, պարոն Մասէ : ամիս մը գողութեան պատճառաւ, և տասն եւ հինգ օր ալ թափառաշրջութեան համար :

— Ինչո՞ւ Թորքէ կը կոչեն զքեզ . Մա-լբուշէ (գլխեպան) բառին կրճատեալն, այն-պէն չէ՞ :

— Այնպէս է, պարոն Մասէ, վասն զի աստեօք գլխեպանաւ եղած եմ :

— Ծխախոտ ունի՞ս :

— Ո՛ւսկից ունենամ, պարոն Մասէ :

— Ա՛ռ ուրեմն քսան սու . քննութիւնը կը շարունակուի . յաջորդ երկուշաբթի վե-րջստին կը տեսնեմ զքեզ :

Թրոքէ դուրս ելաւ հիացած, և անհոգ կերպարանքով մը :

— Պէտք է գիտնաք, ըսաւ Պ. Մասէ ինձ գաւառակով, առ ի տեղեկութիւն, թէ անցեալները քանի մ'անպիտաններ Շէրլ-Միտի փողոցը տուն մը մտան. երբ դուռը կը խորտակէին, դռնապանուհին վրայ հասնելով ձայն հանեց. անոնք ալ երկաթեայ աքծան մը մը-խեցին դռնապանուհւոյն սիրտը. բարեբաղդաբար խեղճ կինը կ'ապրի դեռ :

Երկրորդ մտնողն ալ չատ կը նմանէր առաջնոյն. նոյն անպիտանութիւնը, նոյն մեղկ վատահոգութիւնը :

— Կ'երեւի թէ, ըսաւ ոստիկանապետը, դռներ խորտակել և դռնապանուհիներ մորթելը արհեստ մը դարձած է : Ո՞վ էր խմբին պետը :

— Միւսը :

— Իսկ հարուածը տուողը :

— Միւսը :

— Հապաթրոքէ՞ն :

— Անիկա մասնակցութիւն չունէր :

— Այդ միւս ըսուածին անունն ի՞նչ է :

— Ո՛հ, պարոն Մասէ, չեմ կրնար յայտնել : Գիտէք թէ այդ բանը մեղ համար չէ :

— Եթէ կը կարծես թէ լուսթիւնդ օգտակար պիտի լինի քեզ, մեծապէս կը խաբուիս. չե՞ս մեղքնար քսան տարեկան հասակը կամ այլ ինչ :

— Եթէ չիտակը կ'ուզէք, պարոն Մասէ, կը ձանձնամ այդ մարդը, բայց անունը չեմ գիտեր :

— Լա՛ւ, Լա՛ւ, ա՛ռ քեզի քսան սու և ծխախոտ դնէ. մինչեւ երկուշաբթի ժամանակ կ'ունենաս մտածելու :

— Ի տեսութիւն ուրեմն, պարոն Մասէ :

Այս անգամ ո՛չ թէ աղայ մը, այլ չափահաս մարդ մ'էր ներս մտնողը : Կարճահասակ, դէր, կարմիր երեսներով, ախուր ու նսեմ աչքերով և սեւ հագուստներ հագած : Բուարօ անուն կառապան մ'էր սա :

— Եկո՛ւր Բուարօ, և անգամ մ'ալ պատմէ տեսնեմ ի՞նչպէ՞ս պատահեցաւ քու դէպքդ :

— Գիտէք արդէն . . . պարոն . . . կինս հանդարտ չէր կենար, միմեաց մարդը խեղդուկ ձայնով մը :

— Բարոյականի՞ մարին :

— Այո՛, աղկկց դատ ալ կ'արբենար :

Արդէն կասկած կար մտքիս մէջ, օր մը յանկարծ գացի, քովը մարդ կար : Բարկութիւնս բրդաւ, ուղեցի մարդուն վրայ յարձակիլ. անիկա վազեց, ետեւէն գնացի, չհասայ, և վերագարձայ կնոջս քով . . .

— Եւ դաշոյնի տատներկու հարուած տուիր անոր : Կինդ մեռաւ այդ վէրքերէն :

— Ա՛հ, յարեց խոշոր մարդն աւելի անտարբեր քան վայրագ ձայնիւ մը, ցաւալի բան : Յաւալի մանաւանդ զուկներուս համար, որք փոքր են և անտէր մնացին :

— Բայց արդեօք ամեն ինչ քու պատճառ ձեռնովդ տեղի ունեցաւ : Առաջները պատմեր ես թէ կինդ սպաննել ուզած էին և դու զայն պաշտպաներ ես յարձակողաց դէմ :

— Այն ժամանակ միտքս լաւ չեմ կըրցած հասկցունել. բայց իրողութիւնը ճիշդ այժմ պատմածիս պէս է :

— Եթէ մարդ մը կնոջը խուցը մտած և տալս փախած է, անչուտ տան մէջիները տեսած ըլլալու էին զայն :

— Ձեմ գիտեր :

— Ի՛նչ և է, քննութեան ժամանակ ամեն ինչ պիտի յայտնուի : Երկուշաբթի օրը նորէն կը տեսնեմ զքեզ : Երթաս բարով :

Մարդը ոտքի ելաւ (մոռցայ ըսել թէ Պ. Մասէ իւր մարդիկը նստեցնել կուտայ ձախ կողմը դրուած աթոռի մը վրայ, այնպէս որ պատուհանին լոյսն անոնց երեսին կը զարնէ) :

— Պարոն Մասէ, արդեօք տղայոցս մը բայ լուր մը չե՞մ կրնար տեսնուլ :

— Ինչո՞ւ չէ, հարցաքննիչ դատաւորին գիմէ :

— Գիտէք թէ անոնցմէ մին չորս տարեկան է և միւսը տասն և ութ ամսու. ի՞նչ պիտի լինին խեղճերը :

— Դո՛ւ հանգիստ եղիր, անոնց վրայ հոգ տանող կայ և ոստիկանութիւնը լաւ տեղ մը կը դնէ զանոնք :

— Աւելի աղէկ, պարոն Մասէ, մնաք բարով :

Բուարօ հեռացաւ, միշտ տխրադէմ :

Ներս մտաւ կարճահասակ ծերուկ մը, լայն ուսերով, կոր քիթով, և դորադոյն մորուօք : Հրէի մը կերպարանքն ունէր :

— Նամակ մը դրած էիր ինձ ուսկից բան մը չկրցի հասկնալ : Ի՞նչ է քու ուղածդ :

— Ես կը բողոքեմ թէ անիրաւութիւն է իմ կոնակս բեռնաւորել Մէնած կոչուած մարդու մը բոլոր յանցանքները: Ես Մէնածը չեմ, այլ Կոմպէրը:

— Ի՞նչ անուամբ դատաւարտուեցար:

— Կոմպէր անուամբ:

— Ուրեմն ի՞նչ կը պահանջես:

— Այդ մասին ըսելիք չունիմ, բայց վերջէն ենթադրեցին թէ Մէնածն ալ ես եմ:

— Ո՞րքան բանտարկութեան դատաւարտուեցար:

— Հինգ տարուան:

— Ոճրադատ թէ Պատժական տներին կողմէ:

— Պատժական տներին կողմէ:

— Բացօթեայ գողութեան համար, այնպէս չէ՞. ծանր է արդարեւ: Վրայէդ բան մը գտան:

— Ամեն բան տեղն ի տեղը պատմեմ ձեզ, պարոն Մասէ: Յունիս ամսոյ սկիզբները, Լիոնի կայսրանին մէջ կ'սպասէի ըզբօսանաց կառախմբի մը գալուտեան, ուսկից ծանօթներէս մին պիտի ելնէր: Յանկարծ երկու ոստիկան մօտեցան ինձ և հըրամայեցին որ հետեւիմ իրենց: Գրպաններս խուզարկեցին և տան վարձքի ստացադիր մը գտան. այդ թղթի կտորը սրճարանի մ'առջեւ գետնէն դատած էի: Զիս բանտ տարին, և միւս կողմէ գնացին գտնան ստացադիրն տէրն. այդ մարդը յայտարարեւ թէ թուղթը իւր գրպանէն գողցուած էր դրամապանակին հետ, որոյ մէջ երեք ֆըրանք յիսուս սանթիմ կար: Խնդրեմ, դուք ըսէք, պարոն Մասէ, ի՞նչ օգուտ կրնար ունենալ ինձ այդ բանը:

— Ո՞րքան տոկէ ի վեր Փարիզ էիր:

— Տասն և հինգ օրէ ի վեր:

— Ճիշդ գրօսանաց կառախմբերու եղանակին, յորում աշխարհիս ամեն կողմերէն քսակահատները Փարիզ կը լեցունին: Ո՞ւսկից կուգայիր:

— Նանսիէն:

— Ո՞րք ե՞ն ընտանիքդ, բարեկամներդ, ծանօթներդ: Ո՞ւր կը բնակէիր:

— Ո՛հ, գիտէք թէ աղիկա չեմ կրնար գրուցել, վասն զի իրողութիւնն ընտանեացս կը տեղեկագրէր:

— Այո՛, բոլոր քսակահատներն ալ այդ պատասխանը կուտան: Ի՞նչպէս կը լինի որ այժմ Մազաս կը գտնուիս:

— Դատա վերաքննութեան մէջ է:

— Ուրեմն ժամանակ ունինք նորէն տեսնուելու: Երթաս բարով:

— Մնաք բարով, պարոն Մասէ, բայց մի՛ մոռնաք որ Կոմպէրն եմ ես:

Ապա ներս մտաւ վայելչակազմ երիտասարդ մը. կարճ սեւ մօրուօք, ուշիմ եւ խորամանկ աչքերով, սեւ ներքնակ մը հագած, եւ սենեկի հաղուստով, վասն զի այդ երիտասարդ ինքզինք իւր տան մէջ կը կարծէր: Եւ արդարեւ Յ. . . , վասն զի կը շուարիմ թէ իւր կեղծ անուններէն ո՞րն ընտրելու է, ամբաստանեալ մը չէ, այլ դատաւարտեալ մը. Մազասի մէջ իւր դատաւարտութիւնը լրացնելու մօտ է, և ժիւտըրուարի վերջերն ազատ պիտի թողուի:

— Այսպէս ուրեմն, Պրիւն, Տրէօ անունն ներքեւ դատաւարտուեցար, և չես ուզեր խոստովանիլ թէ Քարաբէն դու ես:

— Երբէք, պարոն Մասէ, պատասխանեց երիտասարդը քաղցր ժպիտով մը:

— Սակայն ահա երեք լուսանկար. մին Տրէօինն է, միւսը Քարաբէինը և երրորդը դու իսկ ես. և այժմ ա՛ն տես թէ իրարմէ կարելի՞ է զանազանել զանոնք:

— Հեռուէն չատեր իրարու կը նմանին:

Բայց ի՞նչ օգուտ կրնան ունենալ այս ամենը, քանի որ ես դատաւարտուած եմ:

— Իրաւ է թէ ինձ համար օգուտ մը չունին, քանի որ Քարաբէ անուն մարդէն բան մը չենք պահանջեր այլ եւս. բայց հարկ է որ արձանագրութիւններս կանոնաւոր լինին: Եւ զարմանալի տե՛ս որ տարիքնիդ ալ մի եւ նոյնն է. Քարաբէ ալ դու ալ մի եւ նոյն երկրէն էք, այսինքն Պասքացի:

— Կրնայ լինիլ, պարոն Մասէ:

— Զգուշացի՛ր, փափաքս կը բերես որ Քարաբէի վրայ նոր խուզարկութիւն մ'ըսկըսիմ. և դու այդ տեսակ խուզարկութեան մը հետեւանքները գուշակելու չափ խելացի ես:

Յ. . . ճիծաղեցաւ սեւ մօրուքին տակէն:

— Տե՛ս, ի՞նչ աչքեր, գոչեց Պ. Մասէ, մարդ ճանչցողի մը կատարեալ զմայլանօք:

— Բայց դուք ալ, պարոն Մասէ, դուք ալ նշանաւոր աչքեր ունիք:

— Այժմ գնա՛, ասկից մինչեւ ժիւտըրուար ամիսը վերստին տեսնուելու ժամանակ ունինք:

Ֆ... դրան սեամին վրայ հանդիպեցաւ
դորշախառն մօրուօք ծերունւոյ մը, որ յու-
նական գգակ մը դրած էր գլուխն և մե-
տաքսեայ պարեգօտ մը հագած: Ճանչցայ
զայն, բայց կրնակս ըյտին դարձուցած լի-
նեղուս պատճառաւ, ինք չտեսաւ իմ երեստ:

— Այսօր յոյժ դառնեալ եմ, յաջորդ
չարթու կը տեսնուինք:

— Ինչպէս որ կ'ուզէք, պարոն Մատէ:

— Գիտէ՞ք թէ ո՛վ է սա, հարցուց ինձ
ոստիկանապետը:

— Կը ճանչնամ դժբաղդաբար, և շատ
պիտի վշտանայի եթէ այս տեսակ տեղ մը
ճանչնար զիս: Իւր նուաստացումը դառն
պիտի դար ինձ:

Այս մարդը Ք * * ն էր, Օբէրայի թա-
ղին սեղանաւորական մեծ ընկերութեան
մը նախկին տնօրէնն, որ մէկ տարի բան-
տարկութեան դատապարտեցաւ, ի պատիժ
իւր յիմարութեան որ իւր խարդախութե-
նէն ալ աւելի մեծ էր:

Սե տարօրինակն այն է որ այս եօթա-
նասնամեայ այրին Մաղասի բանտին մէջ
երկրորդ անգամ առնուեցաւ այս օրերս:

Մանկացեալ սեղանաւորին յաջորդեց
ուրիշ բանտարկեալ մը, բարձրահասակ,
կանոնաւոր դէմքով և երկու քովէն կարծ
կտրուած մօրուսով. բաւական վայելուչ
հագուած էր, առանց զարդարանքի:

— Վալէթ, քոյրդ դրած է ինձ թէ
պատրաստ է քեզ համար վճարել երկու հա-
րիւր ֆրանքը. բայց գործն այսքան դիւ-
րաւ չկարգադրուիր. պէտք է նախ հրա-
պարակէն վերցնել կեղծ փոխանակագիրն,
ապա բողոքարկուին ետ առնուլ սալ իւր բո-
ղոքը: Ինչ և է, դեռ կը մտածենք թէ ի՛նչ
ընել պէտք է: Ստակ չունիս, առ քեզի
հարիւր սոս:

Պ. Վալէթ, դուրս ելաւ մեծ բարեւ
մ'ուղղելով ինձ, որուն պատասխանեցի
պատշաճապէս:

Անհարկով Պ. Մատէն կը հարցաքննէի:

— Մինչեւ վերջը պիտի սպասե՞ս, հար-
ցուց ինձ: Սե իմ հաստատական պատաս-
խանիս վրայ, յարեց. « Ուրեմն միտքդ պա-
հէ՛ Վալէթ անունը: Այս անուն առնչու-
թիւն ունի ամենածանր դատի մը և եղա-
կան դէպքի մը հետ »:

(Մանցեալ յաջորդ էտով)

ՖԻԿԱՍՕ

Ք Ա Ղ Ո Ի Ա Ծ

ՇԱՐԱԹԱԿԱՆ ԼՐԱՑ

5-11 ՅՈՒՆՈՒԱՐ

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Ֆրանսայի համար նոր հոգ մը կը ծագի
ծայրագոյն Արեւելից կողմէ: Կը յիշուի թէ
Քամպուտիոյ կամ Քամպուճի Նորոտամ թա-
գաւորն իւր թագաւորութիւնն յանձնած էր
Ֆրանսացւոց վարչութեան, որոց հովանա-
ւորութեան ենթարկեալ էր արդէն երկար
ժամանակէ հետէ: Կերեւի սակայն թէ Քամ-
պուտիոյ ժողովուրդն համաձիւն չէր թագա-
ւորին այս ընթացից, և, ըստ նորագոյն լը-
րոց, ժողովրդէն մաս մը թագաւորին դէմ
ոտք ելած է, այսպէս անուղղակի ապստամ-
բելով ընդդէմ Ֆրանսական վարչութեան:
Պաշտօնական հեռագիրք գործն աննշան ցոյց
կուտան, բայց ուրիշ աղբիւրներէ տրուած
տեղեկութիւնք աւելի կարեւոր կը ցուցնեն
զայն: Կըսուի որ եթէ Ֆրանսացիք Սայկոնէ
անմիջապէս 5,000 զօրք չկարենան զրկել
ապստամբաց վրայ, Քամպուտիոյ դէպքը
կրնայ ծանրագոյն հանգամանք ստանալ:
Բայց Ֆրանսացւոց տրամադրելի բոլոր զօր-
քերն այժմ կը գտնուին ի Թոնքին, կամ
ընդ հրամանօք Փուրպէ ծովակալին:

— Լոնտրայէն կը հեռագրուի յունուար
15 թուով թէ Ֆրանսայի, Գերմանիոյ, Աւ-
ւրստրիոյ և Ռուսիոյ զեսպանք ըրտ Կրան-
վիլի յանձնեցին իրենց կառավարութեանց
հակառակարկներն ի պատասխանի Մեծին
Բրիտանիոյ առաջարկութեանց ի մասին բար-
ւոքման ելեւմտից Եգիպտոսի: Զորս պա-
տասխանիք համիմաստ են:

— Երկրաշարժի պատճառաւ Կրանտայի
գաւառին մէջ կործանեալ տանց թիւն է
5,241:

Սպանիոյ Ալֆոնս թագաւորը կը չքի ար-
կածեալ քաղաքներն և դիւղերն, և նպաստ
կը բաշխէ, մարդ գլուխ 4 կամ 5 ոսկի անդ-
լիական:

— Ռուսիոյ կայսեր հրովարտակաւ, Իկ-
նաթիէֆ զօրավարն Արեւելեան Սիպերիոյ
առժամակեայ ընդհանուր կառավարիչ ան-
ուանեցաւ:

— Գերմանացի Անիլխանականք կը չա-

բունակեն իրենց ոճիրներ: Ֆրանքֆորդի մէջ, յունուար 15ի գիշերը, մի քանի Անիշ-խանականք, (կամ ծայրայեղ Ընկերվարականք,) յարձակեցան Րումբի անուն ոստիկանութեան բարձրաստիճան պաշտօնակալի մը վրայ, և դաշոյնի հարուածներով մեռցուցին զնա: Բութֆ պաշտօնակալն էր որ Ընկերվարականաց ինչ ինչ դաւերն ի վեր հանած էր 1881ին, և յանցաւորաց դատաւարութեան պատճառ եղած էր: Լայրձիկի մէջ «Ուժանակաւորներու» դատաստանէն սակաւ ինչ յետոյ տեղի ունենալով այս նոր ոճիր, բաւական սրտատանջութիւն կը պատճառէ:

— Պիզմարք իշխանին Երեսօխմանաց ժողովոյ մէջ արտասանած վերջին բանախօսութիւններէ միոյն սա միջոցէսը շատ ուշադրութիւն դրաւած է: Նախարարապետը, հերքելով այն կարծիք թէ, Պ. Պիզմարքի դիւանագիտական տաղանդին կը պարտի Գերմանիա իւր միութիւն, ձեռքով ցոյց տուաւ Մոլդէ Մարէշալն, որ աթոռունի Երեսօխմանական ժողովոյն մէջ, եւ ըսաւ. «Ահա՛ այն մարդ որում կը պարտիք Գերմանիոյ միութիւնը, քան թէ ինձ»:

Երեսօխմանական իւր վերջին նիստերու մէջ առանց ընդդիմութեան քուէարկեց Պիզմարք իշխանին խնդրած վարկերը նորակազմ գաղթականութեանց համար: Իշխանին ընդդիմադիր խմբակներն եւս միացան քուէարկուաց հետ: Այս իրողութիւն կը նկատուի որպէս վճռական ասպացոյց թէ գաղթային աշխարհավարութեան մէջ իշխանը նոյնչափ իւր ետեւ ունի համայն գերմանական ազգն, որչափ իւր արտաքին աշխարհավարութեան մէջ ընդհանրապէս:

— Յունուար 12 թուով Թիէնձինէ կը հեռագրուի առ Թայֆը.

Քորէայի խնդիրը կարգադրեցաւ, և ամսոյս 9ին Քորէայի մայրաքաղաքին մէջ, ի Սէուէ, սլտի կնքուէր կարգադրման դաշնագիրն:

Ինչպէս կերելի. ծայրագոյն Արեւելից կողմէ նոր պատերազմի մը ծագման հաւանակութիւն ընծայող Քորէական խնդիրը խաղաղութեամբ վերջացած է. որովհետեւ Զինաստան, Ֆրանսայի հետ դրազած դուրով, չէր ուզեր գործ ունենալ նաեւ Ճաբոնի հետ: Իսկ Ճաբոն կը վախճար Ռուսիոյ

ոտնձգութիւններէն, որ, ինչպէս կերելէր ռուս լրագրաց ալ լեզուէն, աչք տնկած էր Քորէայի գեղեցիկ նաւահանգստաց վրայ: Երկու Տէրութեանց եւս հաշւոյն կը յարմարէր խաղաղապէս վերջացնել խնդիրը:

— Ֆրանսայի Երեսօխմանական ժողովոյ մէջ Երեսօխման Պ. Պարտու առաջած է որ մահու պատիժն հրապարակաւ ի գործ չըդրուի, այլ, ինչպէս յԱնգլիա, բանտին մէջ: Կառավարութիւնն այս մասին գլխաւոր դատարանաց կարծիքը կը հարցունէ: Էքսի վճռաքննիչ Ատեանն եւս փափաք յայտնած է որ մահու պատիժը բանտերուն մէջ ի գործ դրուի, և բաց ի դատական սովորական պաշտօնէից, լրագիր գլուխ խումբագիր կամ տեղեկագրեր մը միայն ներկայ գտնուի այս տխուր արարողութեան:

— Էտմոնտ Ապու մեռաւ յունուար 17ի գիշերը:

Ն Ե Ր Ք Ի Ն

Հոսարթ փաշա, որ անցեալ չարթու Լոնտրա ուղեւորեցաւ, վեհ. Սուլթանին կողմէ շնորհաւորական գիր մը կը տանի Անգլիոյ Թագուհւոյն ուղղեալ, Կալէսի իշխանին անդրանիկ որդւոյն չափահասութեան, ինչպէս նաեւ Պէաթրիս իշխանուհւոյն Հանրի տը Պաթէնպէրկ իշխանին հետ նշանուելուն առթիւ:

— Երկաթուղեաց միացման խնդրոյն առթիւ Օսմ. Պանքայի դրամատեարց խմբակին առաջարկները Բ. Դրան հաւանութիւնն ըստացած լինելով, կնքելի պայմանագրութեանց թղթերն ու տեղեկագիրը կայս. պալատը զրկուած են վեհ. Սուլթանին վաւերացման մատուցուելու համար, սակայն կայս. Իրատէն չեղաւ տակաւին:

Թէպէտ և Պ. Շիրշ եւս նոյն շինութեան համար հակառաջարկ մը ներկայացուցած է, սակայն կը լսեմք թէ Պ. Շիրշի առաջարկները մերժուած են Բ. Դրանէն:

— Տանիմարքայի գահաժառանգ վալտէմար իշխանն անցեալ չարթու մայրաքաղաքս եկաւ Աթէնքէն և մեծ պատուով հիւրընկալեցաւ: Իշխանը քանիցս պատիւ ունեցաւ վեհ. Սուլթանին հետ տեսակցելու,

այցեւեց Պալտոյ պատմական վայրերն և երեւելի շէնքերը • կիրակի գիշեր չքեղ կոչունք մը տրուեցաւ Եղլտըզի պալատան մէջ: Վեհ Սուլթանն Օսմանիյէի ականակուռ պատուանշանն ընծայեց Իշխանին, և Իշխանն ալ Տանիմարքական Փղի մեծ պատուանշանը մատոյց Ն. Վեհաբաուլթեան:

Վալտէմար Իշխանը չորեքշաբթի օրը մեկնեցաւ մայրաքաղաքէս:

— Հայագգի տուրքապետ Միհրան է Ֆէնտիի երկրորդ կարգի պաշտօնատարութեան աստիճան տրուեցաւ:

— Սթամպուլ կ'իմանայ թէ կայսերական կառավարութիւնն յանձնարարեր է Հոսի Օսմանեան գեսպան Միւզիւրիւս պէյին, որպէս զի Խալիլոյ արտաքին գործոց նախարար Պ. Մանչինիէն բացատրութիւններ խնդրէ Կարմիր ծովու մէջ Խալիլոյ զինուորական արշաւանաց նպատակին, ինչպէս նաեւ այլեւայլ զրոյցներու վրայ, որոց արձագանք կը լինին Խալիլոյ կէս-պաշտօնական թերթերն, և առհասարակ եւրոպական լրագիրք: Միւզիւրիւս պէյի այս ձեռնարկ մտքման հանգամանք մը պէտք է ունենայ զուտ: Այս խնդրոյ վրայ Բ. Պուռն Կ. Պալտոյ խալական գեսպանէն ալ տեղեկութիւն խնդրեր է անպաշտօն կերպիւ:

Սթամպուլ կը յարէ թէ կայսերական կառավարութիւնը դո՛ւ եղբեր է-թէ՛ Գորթի կոմսին կողմէ արուած ապահովիչ խոստումներէն և թէ՛ Միւզիւրիւս պէյի կողմէ զրկուած տեղեկագրէն, որ Խալիլոյ արտաքին գործոց նախարարին հետ իւր տեսակցութեանց արդիւնքը կը յայտնեն:

— Մաքսատան մէջ իբր միասակար վար գրուած խել մը զրքեր ու գրութիւններ երէկ վառեցան ի ներկայութեան Տպագրական Տեսչութեան կողմանէ որոշուած յատուկ պաշտօնատարի մը:

— Ֆար տիւ Պաֆօր կը ծանուցանէ թէ Սուրիոյ կողմերը դադար ալին շարժումնք ըզգալապէս կընդարձակին: Ի հաշիւ Գերմանական եւ Զրանսական սեղանաւորական տանց՝ բազում կալուածներ և ընդարձակ հողեր գնուելու վրայ են:

Նոյն լրագիրը կ'իմանայ նաեւ թէ Նիւտական Նախարարութիւնը մինչեւ մարտ ամիս 30,000 ռուբլոյ երկրորդ թերհաշիւ

մ'ալ պիտի վճարէ վերջին պատերազմէն վընասեալ ռուս հսկատակաց միասուց ի հաշիւ:

— Փէլէպէ լրագիրը կը գրէ թէ Բ. Պուռն հրաւիրեր է զՎալիլիէլ փաշա որ Արեւելեան-Րումէլիի մէջ անցեալ տարւոյն ըսկիւրը կատարուած մարդահամարն ոչնչացրնէ, վասն զի այդ մարդահամար ասորէն կերպիւ կատարներ է և դաւառին բնակչաց մի մասին միասուց հանդամանք ունի:

— Ջորճովայի Օսմանեան ընդհանուր հիւրատու Օտեան խաչիկ էֆէնտի, որ արձակուրդով ժամանակ մը մայրաքաղաքս մընալէ յետոյ վերջերս իւր պաշտօնատեղին գնացած էր, Կ. Պոլիս վերադարձաւ առողջութիւնը դարմանելու համար:

— Մեծ-Եպարքոսն և կրթական նախարարն համաձայնութեամբ չրջաբերական մ'ուղղեցին դաւառական իշխանութեանց, պատուիրելով որ դաւառաց կրթական տուրքերէն գոյացեալ հոսոյթն ուղղակի Մէարիֆի պաշտօնատունը զրկեն, առանց տեղական ծախուց գործածելու:

Ա Ձ Դ Ա Յ Ի Ն

Հաճրէն գեկտեմբեր 4 թուականաւ յազգային Պատրիարքարան հասած հանրագիր մը լիովին կը հաստատէ Հաճնոյ հանրաժանութ բռնի ամուսնութեան դէպքը: Ստորագրողը կը յայտարարեն թէ իրենք պատրաստ են առաջի որ և է դատարանի հաստատել այս քստմնելի դէպքին մանրամասն պարագայները:

Սոյն հանրագրէն զատ, ուրիշ հանրագիր մ'ալ հասած է ի Պատրիարքարան, որ միեւնոյն դէպքը պատմելով, նմանօրինակ տխուր իրողութեանց կրկնումն արդիւլեւ համար միջոցներ ձեռք առնուլ կը խնդրէ:

Պատրիարքական Տեղապահ Գեր. Ռուսնուքեան հայրը սոյն երկու հանրագրերը Կրօնական Ժողովոյ ուղարկութեան յանձնելու համար՝ յառաջիկայ չորեքշաբթի առաւօտ կանուխ ի նիստ հրաւիրեց զԿրօնական Ժողովն:

— Հռութեական Հայոց և Յունաց Պատրիարքական Փոխանորդք, Ասորոց կաթողիկոսական փոխանորդն և Պուլղարաց

Գեր. Էկզարքին կողմէ Անդրիանուպոլսոյ Պոլսոյ առաջնորդն ըստ սովորութեան Ազգ. Պատրիարքարան գալով, Ս. Ծննդեան տօնը շնորհաւորեցին Պատրիարքական Գեր. Տեղապահ Հօր :

—Քէօսթէնէն հասած գրութիւնք կը յայտնէին թէ տեղւոյն Ազգ. Ժողովները լուծեալ լինելով անիշխանութիւն տիրելու է անդանօր, և քահանայն յուսահատելով մեկնելու վրայ է եղեր : Ազգ. Պատրիարքարանն հրահանդ զրկեց քահանային որ անդ կենայ և տեղւոյն ժողովները կողմէ խորհրդակցութեամբ պատուաւոր ազգայնոց, և տեղեկագրէ ի Պատրիարքարան :

—Սեբաստիոյ Քաղաքական Ժողովը տեղւոյն Ազգային Գաւառական Ժողովէն ընտրուած և տեղեկագիրն ըստ օրինի Պատրիարքարան հասած լինելով, Պատրիարքական տեղապահը վաւերացման կոնդակն յղեց ըստ որոշման Քաղաքական Ժողովոյ Ազգային Վարչութեան :

—Մաղաքիա վարդապետ Տէրունեան, որ Մալաթիոյ Առաջնորդական Տեղապահութիւնը թողով անհրաման մեկնած էր իւր հայրենիքն ի Տիգրանակերտ, և Ազգ. Կեդր. Վարչութեան հեռագրաւ հրաման ստացած էր դառնալ ի Մալաթիա, այս անգամ հեռագրաւ կը պատասխանէ Ազգ. Պատրիարքարանի թէ չպիտի կրնայ Մալաթիա երթալ իւր պաշտօնն ստանձնելու, քանի որ տեղւոյն Ազգ. Ժողովք նախօրդ առաջնորդ Սրապիոն եսիսկոպոսը կուղեն իրենց հովիւ :

—Տիվրիկի գիւղերու բնակիչ ազգայինք, որք պանդխտութեամբ մայրաքաղաքս կը գտնուին, հանրապիր մը ստորագրելով Պատրիարքական Գեր. Տեղապահ Հօր մատուցած են, խնդրելով որ Տիվրիկի ազգային կողմէն հազարաթուութիւնն, ինչպէս երբեմն, այսուհետեւ ևս իրենց գիւղօրէից վարժարաններուն բաժին հանէ այն հասոյթներէն, որք կը գտնուին աստ Տիվրիկի բազմաժամանակեայ ընկերութեան անուամբ :

—Կը լսենք թէ Կոստայ անաստաւի Ժողովուրդը կը գանդատի եղեր թէ յիշեալ միաբանութեան քահանայք՝ վանքին արծաթեղէններն տուելով հալեցուցեր և յուսկէտս վատներ են :

—Իզմիրի Արշալոյս Արարատեան լրագիրն Այսրնէն նամակ մը հրատարակած լինելով, որ այնպէս մը կը պատմէր իբր թէ յիշեալ քաղաքի մէջ տեղի ունեցած են աւազակութիւններ, բռնաբարումներ եւ անպահով վիճակ մը կը տիրէ, կուսակալ Հաճի Նաչիտ փաշա երկու պաշտօնատար զրկեց յԱյսրն, իրողութիւնն ստուգելու համար : Կատարուած քննութիւնք կը հաստատեն թէ պատմուած իրողութիւնք բոլորովին սուտ եւ անհիմն էին : Հետեւաբար Արշալոյսի արտօնատէրը ձերբակալուելով իբանտ գրուած է, ուր կը մնայ ցարդ, եւ կը հարցաքննուի :

—Միացեալ Ընկերութիւնք այս տարի եւս չքեղ պարահանդէս մը պիտի տան, առանց դեսպանի պաշտպանութեան : Պատուաւոր ազգայիններէ եւ օտարազգիներէ յանձնախումբ մը կազմուած է ընդ նախագահութեամբ Օսմանեան Կայսերական Պանքայի ընդհանուր Տնօրէն Պ. Յոսթէրի, որ իւր առաջին նիստն ըրաւ չարթուս մէջ, և Պ. Յոսթէրի առաջարկութեամբ ընտրուեցան՝

Գեր-Նոխադահ		
Մագսուտ	Սեպուհ	էֆէնտի
	Գանձապետ	
Էստեան	Մկրտիչ	»
	Քարաուզար	
Նորատունիկեան	Յարութիւն	»
Պարահանդէսը	պիտի տրուի Մեծ Պահօց Մըլինքին :	

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

Ա.Ժ.Ա.ՆՍ ՌԻԻԹԵՐ
ՍՈՒՏԱՆԻՍ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ

Գահիրէ, 21 յունվար

Սըր Հէրպէրթ Սդաւարդ զօրավարին հրամատարութեան ներքեւ գտնուող կիսաբաժինը՝ Մէհտիի զօրաց հետ բուռն կռուէ մը յետոյ գրաւեց զՄէհամէ : Ապրիլ տամբը զօրեղապէս դիմադրեցին : Անգլիացիք բնաւ կորուստ չունին, թշնամեաց մեռելոց թիւն 800ի կը հասնի :

Սըր Չարլս Ռիլըն ընդ հուսկ խարթուս պիտի երթայ և Կորսոն զօրավարը անանեք յետոյ Մէհամէ պիտի վերադառնայ :

ԸՆԴ ԲԱՐՁՐ ՀՈՎԱՆՍԱԽՈՐՈՒԹԵԱՄԲ

ՅՐԱՆՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆ

ՎՍԵՄ. ՏԸ ՆՕԱՅԼ ՄԱՐԳԻՋԻՆ

ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

ԴԻՄԱԿԱՒՈՐ ԵՒ ՍՆԴԻՄԱԿ

Ի ՆՊԱՍՏ

ՄԱՅՐԱԳԱՂԱԳԻՍ ՅՐԱՆՍԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ի ԹԱՏՐՈՆ ՎԷՐՏԻ, ԲԵՐԱ.

Հինգշաբթի գիշեր 17/29 Յունուար, 1885

ՄՈՒՏՔ ՄԷԿ ՕՍՄ. ՈՍԿԻ

ՊԱՏՈՒԱԿԱԼ ՍՆԴԱՄՔ

ՏԵԱՐՔ

ՊԱՐՈՆ ՏԸ ՈՒԻՋՄ. — Գործակատար ֆրանսական դեսպանատան .
ԱԼՖՕՆՍ ԿՍԶԷՅ. — Հիւպատոս .
ԲՈՒ ՊԼԱՆ. — Դեր-հիւպատոս .

ԱՆԴԱՄՔ ԿԱՐԳԱԴԻ՝ ՄԱՍՆԱԽԱՐԵՆ

ՏԵԱՐՔ

Էմիլ Տըվոյ — Նախագահ
Էտանն Քարոյ — Քարտուղար
Լէոն Լըմուան — Գանձապետ
Պատուի Րընէ
Պրաթիա Րոպէր
Պլօք Ալֆրէն
Տօքթ. Տըլաքուր
Տումանժէ Ս.
Տրույյար (Նաւապետ)
Տ'ոլիս Լ. Բ.

ՏԵԱՐՔ

Լըպէ Ալֆրէն
Լը Շըվալիէ Լիւսիէ
Մարոյ Արսէն
Ութրէյ Ժորժ
Րիկտալա թէտոր
Թուզըրի Ժ.
Թուզըրի Պ.
Պարոն տը վանտէօլ
Վալէինոյ Նիքոլա

Տումանժէրը կը գտնուին Քէրտի-Լիոնէ Պանքան ի Ղալաթիա, և Բերա Պան-Մարչէն :

ՃՇՄԱՐԻՑ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՅՔ ՍԻՆԿԵՐԻ



ԸՆՏԱՆԵԱՅ ՀԱՄԱՐ
ԿԱՐ ԿԱՐՈՂԱՅ ՀԱՄԱՐ
ԳԵՐՁԱԿԱՅ ՀԱՄԱՐ
ԿՕՇԿԱԿԱՐԱՅ ՀԱՄԱՐ
ԹԱՄԲԱԳՈՐԾԱՅ ՀԱՄԱՐ
ՓԵՂՈՒՐԱԳՈՐԾԱՅ ՀԱՄԱՐ
ԿԱԶՄԱՐԱՐԱՅ ՀԱՄԱՐ
ԳՈՐԾԱՐԱՆՏԵԱՅ ՀԱՄԱՐ

Բարձրագույն արհեստ



Կը գտնուին միմիայն ՍԻՆԿԵՐԻ ՄԵՔԵՆԱՅՔ մթերանոցները


ԿԱՂԱԹԱՍ,	ԿԼԱՒԱՆԻ ԽԱՆ	2)	ՆԵՐԿԱՅԱԳՈՒԳԻՅ
ՊՈԼԻՍ,	ՄԱՀԱՄԵԴ ՍԻՄՈՆ	90)	Կ. ՆԻՆՏԼԻՆԿԵՐ
ԲԵՐՍ,	ՍԻՐԻՔ ԵՐԵՐԱ	12)	

Ուրիշ ու և է տեղ գտնուածները՝ Սինկերի ճշմարիտ մեքենայից նմանութիւններ են

ԶՐԻ ՓՈՐՁԵՐ

ԶՐԻ ԱՇԿԵՐՏՈՒԹԻՒՆ

Շաբթի չաբաթ վճարելու դիւրութիւն



Ս. Մ. Մինասեան և Ընկերաց Սմերիկեան Վաճառատան մէջ կը ծախուին
Սմերիկայի Երկրագործական գործիքներ : Զանազան տեսակ Արօրներ, Մորա-
ցորենի վար տուող գործիք, մեծ և փոքր : Յորեն մաղելու գործիք մեծ և փոքր :
Գլխաւոր իւր խոտ ջարդող գործիք : Զանազան գործիքներ բանեցնելու համար ձի-
ով դարձող մեքենայ : Պարտեզի գործիքներ : Հրդեհի փոքր ջրհան և այլ զա-
նազան Սմերիկայի ջրհաններ : Այլ և այլ պաղտոց ջուրերը հանելու գործիք :
Զիւրու և արջառաց կերը մանրելու աղօրիք, և այլն, և այլն :
Սմերիկեան Վաճառատուն ի Ղալաթիա Կոստանդնուպոլսոյ :

Արտոնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼ Ք ԼՐԱԳՐՈՅ